2006, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (221)

# Շողակաթ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

3 մայիսի 2006

*Խոր վշտով տեղեկացանք Երեւան-Սոչի ուղերթի օդանավի կործանման եւ բազմաթիվ զոհերի մասին: Սգում ենք այս մեծ ու անսպասելի կորուստը աղետից զոհվածների հարազատների եւ համայն մեր ժողովրդի հետ:*

*Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի՝ Մեր վշտակցությունն ենք բերում զոհվածների բոլոր հարազատներին ու մերձավորներին:*

*Աղոթում ենք առ Աստված, որ Իր երկնային բարձունքներում լույսերի մեջ ընդունի զոհվածների հոգիները եւ պարգեւի երանական խաղաղություն: Հայցում ենք, որ Տերը Սուրբ Հոգու շնորհով համբերություն եւ մխիթարություն պարգեւի հանգուցյալների հարազատներին՝ վերապրելու կորստյան վիշտը:*

*Մշտահունչ աղոթք եւ աստվածային օրհնություն աղետից զոհվածների հիշատակին: Ամեն:*

*Վշտակցությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Հոգեհանգստյան արարողություն՝ Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

«Զորացեք հավատով: Կյանքի վախճանը մահը չէ»:

*Գարեգին Բ*

Շաբաթ երեկոյան՝ մայիսի 6-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Երեւան-Սոչի ուղերթի օդանավի ավիավթարից զոհվածների հիշատակին:

Հայտարարվեց լռության րոպե, որին հետեւեց հոգեհանգստյան արարողությունը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մխիթարության խոսքն ուղղեց զոհվածների ընտանքիներին եւ բարեկամներին, ինչպես նաեւ սգացող աշխարհասփյուռ ողջ հայ ժողովրդին:

Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ առաջին տիկին Բելլա Քոչարյանը, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ տիկնանց հետ: Ներկա էին նաեւ նախարարներ, Ազգային Ժողովի պատգամավորներ, օտարերկրյա դիվանագետներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, զոհվածների հարազատներ եւ հազարավոր հավատացյալներ:

Արարողության ընթացքում Նորին Սրբության կողքին էին Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արք. Պոզապալյանը, Տ. Սեպուհ արք. Սարգսյանը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպչական գործերի տնօրեն Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, հայաստանյան թեմերի առաջնորդներ, հոգեշնորհ եւ բարեշնորհ հայրեր:

Արարողությունը հեռարձակվում էր ուղիղ եթերով:



## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԵՐԵՎԱՆ-ՍՈՉԻ ՈՒՂԵՐԹԻ ԻՆՔՆԱԹԻՌԻ ԱՂԵՏԻՑ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, 6 մայիսի, 2006 թ.)

*Մեծարգո Նախագահ,*
*Հարգարժան պետական այրեր,*
*Մեծահարգ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ,*
*Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.*

*Այս սուրբ Տաճարում մենք այսօր հավաքվել ենք միասնաբար աղոթելու երեք օր առաջ ինքնաթիռի կործանման պատճառով զոհվածների հոգիների հանգստության համար: Աղետալի դիպվածով նրանք՝ անձնակազմի անդամներն ու ուղեւորները՝ 113 տղամարդիկ, կանայք ու երեխաներ, հեռացան կյանքից: Սգակիր են այսօր նրանց հարազատները, սգում է համայն հայությունը աշխարհի բոլոր կողմերում: Այս պահին աղոթակից են մեզ մեր Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալները՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանը, թեմակալ Առաջնորդներն ու դասը եկեղեցականաց, որոնց սրտակցությունն ու զորակցությունն ենք նաեւ փոխանցում սգակիր ընտանիքներին ու մեր ժողովրդին: Մեր մեծ վիշտը կիսում են միլիոնավոր մարդիկ, բազմաթիվ ժողովուրդներ, եկեղեցական, պետական գործիչներ՝ մեզ հետ աղոթք բարձրացնելով երկինք, որ Բարձրյալն Աստված լույսերի ու երանական խաղաղության մեջ ընդունի զոհվածների հոգիները եւ սփոփանք ու մխիթարություն պարգեւի նրանց ընտանիքներին ու հարազատներին:*

*Սիրելիներ, այս կյանքի մաս են փորձանքները, հոգսերը, վիշտը, ինչպես եւ մահը: Մահը սակայն կյանքի վախճանը չէ: Մահն այս կյանքում է՝ ժամանակավոր ու անցավոր: Աղետից զոհվածները հեռացան մեզանից, բայց կյանքը չհեռացավ նրանցից: Նրանք գնացին միանալու մեր Արարչին, Ամենակարող Աստծուն, ով մեր նկատմամբ անքավ Իր սիրով պարգեւել է մեզ հավիտենական կյանքը՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով:*

*Միշտ դժվար է հարազատից բաժանումը, մեծ է հարազատի կորստի ցավը: Մենք չգիտենք, թե ինչպես կամոքի Աստված վշտերն ու մորմոքը, ինչ սփոփանք կպարգեւի, բայց թող անհատնում եւ անխախտ լինի մեր հույսը Աստծո ողորմության վրա: Աստված է, որ զորացնում է մեզ, երբ մենք վշտահար ենք եւ տկար հոգով: Աստծո մոտ է ամեն մխիթարություն: Աստված մխիթարում է մեզ մեր նեղությունների մեջ, որպեսզի մենք էլ, ինչպես ասում է առաքյալը, կարող լինենք մխիթարել նրանց, ովքեր նեղությունների մեջ են (Բ Կորնթ. Ա : 3-4):*

*Մխիթարություն է, որ մենք միայնակ չենք մեր վշտի մեջ: Մխիթարություն է, որ մարդիկ սատարում եւ օգնում են միմյանց աղետների, փորձանքների, ցավերի մեջ: Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր մեր ժողովրդի զավակներին, հայրենի մեր իշխանություններին՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Ռոբերտ Քոչարյանի՝ վշտացյալ սրտով սգակիր ընտանիքներին սատարելու եւ զորակցելու համար: Այսօր հանուն մեր ժողովրդի շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Քույր Եկեղեցիների մեր հոգեւոր եղբայրներին, մեզ վշտակից երկրների պետական այրերին, մտավորականությանը, հասարակականքաղաքական գործիչներին, Հայաստանում դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, բազմահազար անհատներին, ովքեր մխիթարություն հավելեցին եւ ցավակից եղան սգացյալ մեր ժողովրդին: Շնորհակալության Մեր խոսքն ենք բերում Մոսկվայի եւ համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին, ՌԴ նախագահ տիար Վլադիմիր Պուտինին, պետական այրերին ու ողջ ժողովրդին՝ օգնության ամեն միջոց ու ջանք՝ ինչ հնարավոր էր օդանավի նման աղետի իրավիճակում, գործադրելու եւ Դաշնությունում սգո օր հռչակելու համար:*

*Ի խորոց սրտի աղոթքով հայցում ենք, որ Տերը արարչական Իր սիրով ու գթությամբ ընդունի հոգիները աղետի 113 զոհերի եւ արժանացնի աստվածային Իր լույս տեսությանը, եւ Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու մխիթարություն պարգեւի նրանց սգակիր ընտանիքներին, հարազատներին ու մերձավորներին: Զորացեք հավատով, սիրելիներ: Կյանքի վախճանը մահը չէ: Նրանց կյանքը պիտի շարունակվի, նրանց հիշատակը անմար պիտի լինի ձեր աստվածասեր ընթացքով եւ արդար գործերով:*

*Աղոթենք, որ Ամենօրհնյալ Աստված խաղաղ, ապահով ու անփորձանք պահպանի աշխարհը համայն եւ ժողովուրդներին բոլոր եւ սիրո ու հանապազ օրհնության ներքո՝ ազգս հայոց:*

*Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:*



Տե՛ս էջ 2

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում եւ շնորհավորում համայն մեր ժողովրդին Հաղթանակի տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա առիթով:*

*Հայրենասիրության ու անձնվիրումի փառապանծ վկայություններով եւ հերոսների անմահ հիշատակի ոգեկոչումով ենք նշում Հաղթանակի տոնն ու Շուշիի ազատագրումը՝ աղոթքով հիշելով խաղաղ ապրելու ձգտումով ու կամքով պայքարած բոլոր նվիրյալներին:*

*Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան ազատամարտում մեր Սուրբ Եկեղեցու օրհնությամբ են հաղթանակներով պսակվել Հայրենիքի պաշտպանների ջանքերը՝ հանուն նոր կյանքի հույսերի ու ազգային իղձերի իրականացման:*

*Ի խորոց սրտի աղոթում ենք փառքով զոհվածների հոգիների հանգստության համար եւ հայցում Բարերար Աստծուց, որ խաղաղ պահի աշխարհը, մեր Հայրենիքը եւ ամենառատ Իր օրհնությամբ հաստատի ժողովուրդներին սիրո ու եղբայրության մեջ:*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԱԿ պատվիրակությանը



Մայիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության նորընտիր անդամներին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, շնորհավորեց նրանց ընտրության առիթով եւ իր բարեմաղթանքները հայտնեց:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց կուսակցության հայրենանվեր ու եկեղեցանվեր առաքելությունն ազգային կյանքում: Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց նաեւ նույն ոգով ու նախանձախնդրությամբ, հայրենիքի շահերի բարձր գիտակցությամբ նպաստել ժողովրդի բարի իղձերի իրականացմանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ



Մայիսի 6-ին Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Էջմիածին, Բաթումիի Սուրբ Փրկիչ, Ախալքալաքիի Սուրբ Խաչ, Ախալցիխեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս հայոց եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ մայիսի 3-ին Երեւան-Սոչի օդանավի վթարի հետեւանքով ողբերգորեն զոհվածների: Ներկա գտնվեցին իշխանական մարմինների, համայնքային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մինչ սգո արարողությունը, թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն այցելեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն՝ Սգո գրքում թողնելով իր վշտակցությունը:

***

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում հոգեհանգստյան պաշտոնն անցավ առաջնորդ





հոր հանդիսապետությամբ: Ներկաներն աղոթեցին զոհերի խնկելի հիշատակի եւ երկնային արքայության մեջ նրանց հոգիների լուսավորության համար: Հավարտ արարողության՝ Վազգեն սրբազանը մխիթարական իր ցավակցությունը բերեց զոհվածների ընտանիքներին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդին, Հայաստանի Հանրապետության ղեկավար մարմիններին, համայն հայությանը: Նա երախտիքով եւ գոհունակությամբ խոսեց այս օրերին վիրահայությանը կարեկից Վրաց Ուղղափառ եկեղեցու, Վրաստանի մյուս՝ քույր Եղեցիների, Վրաստանի ղեկավարության, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակի աշխատակիցների մասին: Վազգեն սրբազանն իր գոհունակությունը հայտնեց նաեւ Կովկասի մուսուլմանների լիազորված ներկայացուցիչ Ղազի Ախունդ Ալի Ալիեւին, ով անձամբ այցելեց առաջնորդարան եւ իր վշտակցությունը հայտնեց հայ ժողովրդին:

Սգո արարողությանը եկեղեցում էին Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը՝ տիկնոջ հետ, դեսպանատան հյուպատոս Արթուր Սարգսյանը: Այստեղ էին Վրաց խորհրդարանի հայ պատգամավորներ, հայ համայնքի վարչության անդամներ, Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարանին կից Կրոնական խորհրդի կոորդինատոր Լեյլա Ջեջելավան, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակին կից Հանդուրժողականության կենտրոնի տնօրեն Բեքա Մինդիաշվիլին, Թբիլիսիի մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Սերգո Վարդոսանիձեն եւ ուրիշներ:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

## Ս. Գրիգոր Տաթեւացի

# Քարոզ խորհուրդների մեղքերի մասին

(հատված)

> *«Ամբարիշտների խորհուրդների քննություն պիտի լինի»*
>
> *(Իմաստ. Ա 9):*



Մարդկանց գործած մեղքերի տեսակները երեքն են՝ խորհուրդների (մտածումների), խոսքերի եւ գործերի: Քանզի մարդը կազմված է երեքից՝ հոգուց, մարմնից եւ մտքից, ու յուրաքանչյուրի առկայությամբ մարդը սխալվում է ու մեղքեր գործում՝ թե՛ խորհրդով, թե՛ խոսքով եւ թե՛ գործով: Եվ ամենից առաջ խորհուրդների մեղքն է, որ սատանան սերմանում է մարդկանց մտքում, հետո բուսցնում է մարմնում եւ մեղք գործել տալիս: Դրա համար վարդապետներն ասում են, թե բավական չէ միայն մարմինը մեղքերից [զերծ] պահելը, այլեւ [պետք է] զգուշանալ մտածումներից: Եվ սա [լինում է] տասը պատճառով:

Նախ, որովհետեւ մեղքը [սկզբում] արմատանում է խորհրդում եւ ապա բուսնում մարմնում: [Ուստի] խորհուրդը պետք է սուրբ պահել, որպեսզի չարը նրանում չարմատանա եւ չբուսնի զգայարաններում:

Երկրորդ, որովհետեւ խորհուրդների մեղքը տարածվում է բովանդակ մարմնով, ինչպես իժերի թույնը, իսկ մարմնի մեղքը՝ միայն այն մասով, որով գործում է՝ ձեռքերով կա՛մ ոտքերով: Դրա համար խորհուրդներից առավել պետք է զգուշանալ:

Երրորդ, որովհետեւ խորհուրդն ու միտքը մարդու համար ղեկավար եւ առաջնորդ են: Օրորինակ, եթե կառքը մոլորվում է, կառապանն այն ուղղում է, իսկ եթե կառապանն է նեղում, կառքն ու կառապանը միասին են կորչում: Նույնպես էլ եթե մարմինն է մոլորվում, միտքը կարող է այն ուղղել, իսկ եթե միտքն է մոլորվում եւ հեշտանում մեղքերի մեջ, մարմինը չի կարող այն ուղղել:

Չորրորդ, որովհետեւ չար խորհրդով համակրում ենք սատանային եւ դառնում նրա բարեկամները: Քանզի մեղքերի ութ խորհուրդ կա, որ սատանան սերմանում է մարդու սրտում եւ գերում մեղքերով եւ իբրեւ նետեր՝ ծածուկ արձակում է դեպի խորհուրդը, խոցում մարդու հոգին եւ սպանում: Դրա համար պետք է զգուշանալ խորհրդի մեղքից:

Հինգերորդ, որովհետեւ Աստված հոգի է եւ ոչ թե մարմին, ու բնակվում է մեր իմացական մտքում եւ հոգում, ըստ այդմ էլ՝ կենդանի «Աստծո տաճար եք դուք, եւ Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. Գ 16): Եվ ինչպես մեր մարմինը հոգու տաճարն է, նույնպես էլ մեր հոգին՝ Սուրբ Հոգու: Արդ, բավական չէ միայն մարմինը [սուրբ] պահել, այլ՝ հոգին ու մարմինը, որպեսզի լինի Աստծո սուրբ տաճարը: Ապա թե ոչ՝ «Իմաստության Սուրբ Հոգին փախչում է նենգությունից եւ անմիտ խորհուրդներից»:

Վեցերորդ՝ մեր իմացական միտքը հոգու համար լուսատու աչք է եւ ճրագ: Եթե միտքը պայծառ է ու մաքուր, հոգին էլ լուսավոր է եւ պայծառ: Իսկ եթե [այն] մեղքերով է աղտեղված՝ հոգին մթնած է եւ մեղքով խավարած, ըստ այդմ՝ «Մարմնի ճրագը աչքն է. եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի» (Մատթ. Զ 22-23):

Յոթերորդ՝ միտքը հայելի եւ Աստծո պատկերն է, որով տեսնում ենք Աստծուն: Արդ, ինչպես ժանգոտ հայելին կույր է եւ չի տեսնում, իսկ մաքուրը պատկերն արտացոլում է եւ ցույց է տալիս, նույնպես եւ մեր բանական միտքն է հայելի, որով տեսնում ենք Աստծուն: Արդ, եթե [այն] մեղքով ժանգոտված է, կույր է եւ չի կարող իր մեջ տեսնել Աստծուն: Իսկ «ովքեր սրտով սուրբ են, նրանք կտեսնեն Աստծուն» (Մատթ. Ե 8),- ասում է Տերը: Դրա համար խորհուրդը պետք է մաքուր եւ սուրբ պահել:

Ութերորդ՝ մեր միտքը հոգու եւ մարմնի դատավորն է, ըստ այդմ՝ «Մի քաղաքում մի դատավոր կար...» (Ղուկ. ԺԸ 2): Արդ, երբ դատողը պարզերես եւ անկաշառ է, ճշմարիտ եւ ուղիղ է դատում: Բայց երբ սխալվի, դատաստանն էլ սխալ կանի: Դրա համար միտքը պետք է մեղքերից սուրբ եւ մաքուր պահել, որ կարողանա ուղիղ եւ արդար դատաստան առնել իր եւ այլոց մարմնի եւ հոգու համար:

Իններորդ՝ մեր մեջ խոսքի եւ իմաստության աղբյուրը միտքն է: Արդ, ինչպես որ աղբյուրի ակունքը հստակ է, [ապա] ջուրը բխում է պարզ, հստակ եւ գեղեցիկ, իսկ եթե աղբյուրի ակունքը պղտորվեց, ջուրը դառը եւ պղտոր կհոսի: Նույնպես եւ մեր հոգին. եթե հստակ է մեղքերից, խոսքն ու գիտությունը պարզ եւ հստակ են գալիս եւ մխիթարում այլոց, իսկ եթե ապականված են մեղքով, խոսքը խառնակ եւ ապականված կլինի: Դրա համար խորհուրդը պետք է սուրբ եւ մաքուր պահել:

Տասներորդ՝ ով խորհրդում մեղք ունի, մինչ մեղք գործելն առավել է սիրում եւ կամենում: Իսկ ով մարմնով է [մեղք] գործում, հետո տրտմում է, զղջում եւ ապաշխարում: Դրա համար խորհրդի մեղքին սիրով է կապված, չի զղջում եւ իրեն չի թվում, թե մեղք ունի: Իսկ մարմնի մեղքը հայտնի է. իրեն մեղանչական է տեսնում եւ զղջում: Դրա համար էլ որքան հնարավոր է, պետք է խորհուրդը մեղքերից առավել սուրբ պահել:

*Աշխարհաբարի փոխադրեց Արմեն դպիր ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Դ լսարանի սան*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

## (1066-1105)

*Սկիզբը՝ թիվ 4-6, 8*

1084 թ. փետրվարի 28-ին լրացավ 552 թվականի հուլիսի 11-ին սկսված հինգհարյուրյակը: Որոշակի տարբերություններ ի հայտ եկան հայոց հուլյան տոմարների միջեւ, քանի որ 532 տարիների շրջանը հայերի մոտ ավարտվեց 133 օր առաջ՝ փետրվարի 28-ին, իսկ հուլյան տոմարով այն պետք է լրանար հուլիսի 11-ին: Յասկանալի է, որ պատճառը հայոց տոմարի շարժական բնույթն էր, այսինքն՝ տարվա 365 օրերը բաշխված էին 30 օրանոց 12 ամիսների եւ 5-օրյա մեկ հավելյալ ամսի վրա: Յայոց տոմարը չուներ նահանջ տարի, որի հետեւանքով յուրաքանչյուր 4 տարվա ընթացքում հայկական տոմարը հուլյանի նկատմամբ ետ էր ընկնում մեկ օրով, եւ 532 տարիների ընթացքում տարբերությունը կազմել էր 133 օր: Այս տարբերության պատճառով հայերն այլեւս չէին կարող առաջին հինգհարյուրյակի հաշվով տոները կատարել, քանի որ եթե առաջին հինգհարյուրյակը հուլիսի 11-ից ետ էր ընկել մինչեւ փետրվարի 28-ը, ապա երկրորդ հինգհարյուրյակում ետ կընկներ մինչեւ հոկտեմբերի 18-ը, եւ Զատիկն ու մյուս տոները հայկական բոլորովին տարբեր ամիսների մեջ կհայտնվեին (իրականում արդեն հայտնվել էին): Աթանաս Տարոնեցին ամբողջ 532 տարիների շրջանի համար, հավանաբար, հայկական տոմարով տոների ցուցակ էր կազմել, եւ երբ այդ ՇԼԲ (532 տարիներ) շրջանն ավարտվել էր 1084 թվի փետրվարի 28-ին, այլեւս անհնար էր նրանից օգտվել հաջորդ հինգհարյուրյակի համար: Տոմարական կնճիռը լուծեց փառիսոսցի քահանայի որդի Յովհաննես Սարկավագ վարդապետը, որը Յաղպատի վանահայրն էր: Յայտնի չէ, թե ինչո՞ւ է նա Սարկավագ մականունը ստացել, եւ հազիվ թե ընդունելի է Մ. Օրմանյանի բացատրությունը, թե նա այդպես է կոչվել կանխահաս ուսմանց եւ ընդարձակ հմտության պատճառով: Մի բան պարզ է, որ նա եղել է իր ժամանակի ամենատաղանդավոր ու զարգացած դեմքերից մեկը, որին բախտ էր վիճակվել հայոց շարժական տոմարը վերածելու անշարժի: Գուցե եւ դա շատ մեծ գործ չէր, քանի որ տոմարական խնդիրները լուծել էր հուլյան տոմարը: Այսուհանդերձ, ինչ-որ մեկը դրան պետք է ձեռնամուխ լիներ: Նա հայոց տոմարում մտցրեց նահանջ տարվա գաղափարը՝ յուրաքանչյուր չորրորդ տարում մեկ օր ավելացնելով տարվա 365 օրերին, որով վերջ գտավ հայոց տոմարի հետ ընկնելը հուլյանից: Դրան համապատասխան՝ հավելյաց ամիսը յուրաքանչյուր չորրորդ տարվա վերջում հաշվում էր 6 օր: Յովհաննես Սարկավագը հայոց տոմարի նավասարդի 1-ն անխախտ կերպով համապատասխանեցրեց հուլյան տոմարի օգոստոսի 11-ին: 1084 թվի փետրվարի 29-ին, քանի որ տարին նահանջ էր, սկսվեց հայոց սարկավագագիր կամ անշարժ տոմարը, սակայն թե ինչ ձեւով նավասարդի 1-ը փետրվարի 29-ից տեղափոխվեց մինչեւ օգոստոսի 11-ը, մեզ հայտնի չէ: Իսկ օգոստոսի 11-ը գալիս էր Յայկի 1460-ամյա շրջանից: Յովհաննես Սարկավագն անշուշտ կազմեց հերթական հինգհարյուրյակի տոների ժամանակացույցը, որը լրանալու էր 1616-ին: Ցավոք, Յովհաննես Սարկավագը, բացի հոգեւոր իշխանությունից, այլ իշխանություն չուներ, ուստի նրա տոմարը պարտավորիչ չէր: Իսկ պատմությունը հիշատակներ չի պահպանել այն մասին, թե Գրիգոր Վկայասեր կամ Բարսեղ Պահլավունի կաթողիկոսները գործողության մեջ դրե՞լ են այն արդյոք: Այսուհանդերձ, շատ կասկածելի է, որ այդ ձեռնարկին Բարսեղ կաթողիկոսը մասնակցած չլինի: Չի բացառվում, որ նոր տոմարը ներկայացվել է Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին, սակայն նա ինչ-ինչ պատճառներով պաշտոնական կիրառման հրաման չի տվել, կամ էլ հրամանի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Յամենայն դեպս, դրանից հետո նկատվում է շարժական եւ անշարժ տոմարների խառը կիրառություն, ըստ որում՝ անշարժն առավելապես՝ Եկեղեցու կողմից:



Փոքր Յայքում հաստատված հայկական անվանական թագավորությունների վերացումով Փիլարտոսը մնաց հայ ամենանշանավոր իշխանավորը: Նրա օրոք Անտիոքի մեջ բյուզանդացիները դուքս էին նշանակել Վասակ Պահլավունուն, որը Մագիստրոսի որդին էր եւ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ավագ եղբայրը: Մեզ անհայտ պատճառներով հույները գրգռվեցին նրա դեմ, եւ Անտիոքի շուկայում իբրեւ թե խնդրագիր ներկայացնելու նպատակով նրան մոտեցած երկու զինվորականներ ուրագով սպանեցին նրան, երբ նա ձիուց կռացել էր՝ խնդրագիրը վերցնելու: Վրեժը լուծելու համար հայկական զորամասերը եւ հայ պաշտոնյաները քաղաք հրավիրեցին Փիլարտոսին, որը գալով Անտիոք՝ գրավեց քաղաքն իր շրջակայքով, եւ հաստատների գունդը, որից էին Վասակին սպանողները, գրեթե ամբողջությամբ՝ շուրջ 700 հոգի, կոտորեց 1077 թվին: 1083 թվին նա գրավեց նաեւ Ուռհան, որի իշխանն ազգությամբ հայ Վասիլ Աբուքայյանն էր, որը հաջորդել էր Սմբատին:



*Շարունակությունը՝ էջ 5*

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



*Գործ՝ Ս. Մուրադյանի*

**Ա**

Բանաստեղծ լինելը դժվարին մրցակցության ու պատասխանատվության գործ է, այն էլ հայ ժողովրդի բանաստեղծ լինելը: Գրիչ վերցնող ամեն ստեղծագործող, եթե միայն գրական պարզ արհեստավոր չէ եւ հանդգնում է իր գրածը հրատարակել, կամա թե ակամա դառնում է իրեն նախորդած ազգային ու համաշխարհային բոլոր մեծությունների մրցակիցը: Եվ ամենից դժվարը հենց հայրենի բանաստեղծական միջավայրում նկատելի դառնալն է, ազգային բանաստեղծների կողքին տեղ ունենալը, իսկ առանց դրա անկարելի է համաշխարհային ճանաչումը: Ուրեմն յուրաքանչյուր նոր բանաստեղծի հայտնություն ենթադրում է նոր խոսք ու ասելիք, նոր գեղարվեստական մտածողությամբ արտահայտված նոր բովանդակություն, որով ազգային գեղարվեստը մրցության գնա համաշխարհայինի հետ: Այլապես Նարեկացու ու Շնորհալու, Թլկուրանցու ու Քուչակի, Սայաթ-Նովայի ու Դուրյանի, Պեշիկթաշլյանի ու Սիամանթոյի, Թումանյանի ու Իսահակյանի, Մեծարենցի ու Վարուժանի, Ռ. Սեւակի ու Տերյանի, Չարենցի ու Շիրազի համաստեղության մեջ տեղ ունենալը կմնար անիրականանալի երազանք:

Ո՞վ է Պարույր Սեւակը որպես բանաստեղծ, ի՞նչ մնայուն արժեքներով է նա տեղ նվաճել հայ գրականության մեծերի շարքում, ինչո՞վ է նա մեր ժամանակակիցն ու հոգեհարազատը եւ նոր սերունդների գրական ուսուցիչը: Ահա հարցերի մի շարք, որոնց պատասխաններն է՛լ ավելի կհստակեցնեն բանաստեղծի դիմանկարը, կբացահայտեն նրա նորարարության էությունն ու ստեղծագործության գեղարվեստական արժեքը:

Նախապես ասենք, որ Պ. Սեւակը գնահատման, առավել եւս նախորդ մեծությունների հաշվին գնահատելու կարիք չունի. ուստի չպիտի խորանանք մասնագիտական մանրամասների մեջ, այլ պիտի ջանանք հանրամատչելի ձեւով բնորոշել Պարույր Սեւակ երեւույթը՝ ըստ նրա գեղարվեստական ու գիտական վաստակի եւ մեր գրականությանը մատուցած ծառայությունների:

Հայ գրողներից քչերին է վիճակվել իրենց անունով գրական դպրոց ստեղծել, ունենալ հետեւորդներ ու հաջորդներ, վճռաբար ազդել սերունդների գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքի վրա եւ ուղղորդել այն. միջնադարում ունեցել ենք Նարեկյան դպրոց, նոր ժամանակներում՝ աբովյանական, թումանյանական, տերյանական, նորագույն ժամանակներում՝ չարենցյան, պարույրսեւակյան գրական դպրոցներ: Բոլորովին այլ խնդիր է, որ տաղանդով սրանց մոտ, նույնիսկ ոմանց գերազանցող բանաստեղծներից շատերն իրենց անունով գրական դպրոց չեն ստեղծել: Այդպիսի առանձնաշնորհ տրված է եղել միայն նրանց, ովքեր չեն զոհացել ունեցած գեղարվեստական մակարդակով եւ ձգտել են հայտնաբերել ու կիրառել ինքնարտահայտման նոր ձեւեր ու հնարավորություններ:

Անկասկած է, որ նորագույն ժամանակներում ամենից ինքնատիպ հայ բանաստեղծներից մեկը հետեւորդների մեծ բանակով իր գրական դպրոցն ստեղծած եւ հաջորդ սերունդների համար բանաստեղծական մտածողության նոր ուղի հարթած Պարույր Սեւակն է: Եռակի մեծություն է նա. բանաստեղծ լինելով՝ միաժամանակ գիտական լուրջ արժեքներ է ստեղծել գրականության պատմության (մանավանդ՝ սայաթնովագիտության) ու տեսության եւ գրաքննադատության բնագավառներում, սերունդներին թողել է նաեւ ռուս ու եվրոպական հեղինակների երկերի բարձրորակ թարգմանություններ: Սրանք իրար բացառող բնագավառներ չեն, ընդհակառակը, սերտորեն շաղկապված են եւ փոխներթափանցված: Անգամ չպետք է վախենալ ասելուց, որ այն բանաստեղծություններում ու պոեմներում, ուր Սեւակ տեսաբանն ու մտածողը գերազանցել են բանաստեղծին, այնտեղ տուժել է պոեզիան: Սակայն Պ. Սեւակի գեղարվեստական երկերը չեն ստեղծվել առանց Սեւակ տեսաբանի ու մտածողի, եւ վերջինս էլ՝ տեսաբանն ու մտածողը, հրաշալի գիտեր մեր գրականության արժեքը, նրա անվիճելի ուժն ու ցավալի պակասությունները, չէր հանդուրժում մանավանդ բանաստեղծական մտածողության մեջ հետամնացությունն ու արհեստավորությունը, ուստի նպատակադրված գրում էր՝ մեր գեղարվեստական խոսքի ուժն ավելի զորացնելու եւ պակասությունները նվազեցնելու, նորագույն ժամանակների համաշխարհային գեղարվեստական մտածողությանը համընթաց քայլելու, մեր ազգային գեղարվեստը պոեզիայում առաջավոր ժողովուրդների նվաճումների հետ մրցության տանելու ազնիվ ձգտումով: Հրաշալի գիտեր նաեւ բանաստեղծական խոսքի դաստիարակիչ ուժը, գիտեր, որ նոր գաղափարները, մտքերը սերունդների վրա ներգործող մեծ ազդեցություն են ունենում այն դեպքում, երբ ասվում են նախորդներից տարբեր եղանակով, գեղարվեստական պատշաճ հանդերձավորումով, պատկերավոր ու տպավորիչ:

**Բ**

Պարույր Սեւակը (բուն ազգանունը՝ Ղազարյան) ծնվել է 1924 թ. հունվարի 24-ին Արարատի մարզի այժմ Զանգակատուն (նախկինում՝ Չանախչի) գյուղում: Մանկությունից՝ տասնմեկ տարեկանից սկսած՝ տեղի դպրոցում սովորելիս էլ գրել է՝ իր իսկ բնութագրմամբ՝ «օրացուցային» բանաստեղծություններ (Հունվարի 1, Մարտի 8, Մայիսի 1, Նոյեմբերի 7 եւ այլն)՝ առանց նախապես որեւէ իմաստ դնելու նրանց մեջ, անգամ դեռ 7-8-րդ դասարանների աշակերտ՝ ծրագրել էր ողջ հայոց պատմությունը «Երկիր Նաիրի» խորագրով շարադրել չափածո: Մայրը մտահոգված էր, որ իր՝ առողջության համար վտանգավորության չափ շատ կարդացող տղան դառնա գոնե «էն «Գիքորը» գրողի», այսինքն՝ Հովհ. Թումանյանի պես մարդ: Իսկ սա արդեն կողմնորոշում էր դեպի լուրջ գրականություն, եւ Պարույրը սկզբից էլ վստահ էր իր գրական ապագա հաջողությանը: Գյուղում չկային սովորելու նվազագույն պայմաններ. առաջին անգամ 10-րդ դասարանում էր հաջողվել հայթայթել բրեզենտե կոշիկ: «Ախար ես միջնակարգն ավարտեցի՝ այդպես էլ չիմանալով, թե ինչ բան է աթոռ ու սեղան: - Մորս հացի տախտակն էր իմ սեղանը, պառկում էի բերանքսիվայր եւ հացի տախտակի վրա արտագրում կամ շարադրում» (Էդ. Մեհրաբյան, Պարույր Սեւակ, «Պարբերական», Երեւան, 1990, էջ 75 ), - հետագայում խոստովանում է բանաստեղծը: Բայց սրա դիմաց կար ընթերցանության չմարող ծարավ. ոտքով գյուղից գյուղ ընկած՝ գիրք էր փնտրում, կարդում էր անկանոն, ինչ պատահի:

1930-ական թվականները խորհրդային վատագույն տարիներից էին, մանավանդ 37 թվականը, երբ պետական հատուկ ծրագրով երիտասարդ հասակում դաժանորեն ոչնչացվեցին Չարենցի ու Բակունցի նման հանճարները, գլխատվեց հայ մտավորականության ծաղիկը, եւ մահվան սպառնալիքով արգելվեց ազգային գաղափար ու ոգի պարունակող մեր ողջ գրականությունը:

Վտանգը գիտակցող, բայց հանդուգն մարդիկ նախատակված ու արգելված գրողներին կարդում էին գաղտնի՝ խորհրդային ղեկավարների, սոցիալիզմի գաղափարախոսների գրքերի կազմերի մեջ Րաֆֆու եւ Պատկանյանի, Սիամանթոյի ու Վարուժանի, Չարենցի ու Բակունցի գրքերը թաքցրած: Այս պայմաններում էր բանաստեղծ դառնալու հեռանկարով խանդավառ պատանի Պարույրը կարդացել արգելված Չարենցին: Հետո նա պիտի խոստովաներ. «Գյուղում գիտեի Եղիշե Չարենցի անունը: Սուրխաթյանի դասագրքից գիտեի, որ Չարենցը հայ գրականության ողնաշարն է՝ Խանջյանի խոսքով ասած: Իսկ Սուրխաթյանի խոսքերն էլ անգիր գիտեի. «Չարենցի հորիզոնը համաշխարհին է, մոտիվները՝ միջազգային»: Ուստի շատ ցավեցի, երբ իմացա, որ Չարենցի գրքերը հանելու են գրադարանից, եւ «Գիրք ճանապարհի»-ի մի օրինակ գողացա գրադարանից ու տուն տարա: Մինչեւ լույս կարդացի գիրքը, չհավատացի ո՛չ Խանջյանին, ո՛չ Սուրխաթյանին, որովհետեւ Չարենցը ըստ իմ ճաշակի բանաստեղծ չէր: Հետո հասկացա, որ Չարենցն այդ ժամանակ ինձ որպես բանաստեղծ սպանել էր՝ հետո հարություն տալու թաքուն մտադրությամբ»:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



*Սկիզբը՝ թիվ 4-8*

Վերը ասվածի լույսի տակ վստահաբար կարելի է ասել, որ Մաշտոցը, Գողթն գալով, նպատակ եւ թերեւս հանձնարարություն ուներ Գրիգոր Լուսավորչի օրինակով կապ հաստատել տեղի հեթանոս քրմերի հետ՝ հուսալով նրանց մոտ գտնել հեթանոսական մատյաններ եւ նախաքրիստոնեական հայ դպրության հետքեր, գուցե նաեւ իր ձեռքի տակ եղած մեհենական գրերը կարդալու գաղտնիքը: Եվ զարմանալու որեւէ բան չկա այստեղ. ինչպես քրիստոնյա քահանային անհնար է պատկերացնել առանց աղոթագրքի եւ ժամագրքի, այնպես էլ հեթանոս քրմերն էին անբաժան իրենց մեհենական գրքերից եւ սրբազան խորհրդատետրերից: Այս ենթադրությունը շուտով անուղղակի հաստատում է Կորյունը, բայց շատ ավելի որոշակի՝ ինքը Խորենացին:

Հետեւենք Կորյունին. «Իսկ երանելույն վաղւաղակի զաւետարանական արուեստն ի մեջ առեալ, ձեռն առկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին, գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով՝ անկանեին ի կողմանս Մարաց» (Կոր., [Ե.], էջ 40: Տե՛ս նույնը եւ Ագաթ., § 785): Հեթանոս քրմերը հրաժարվում են ընդունել Մաշտոցի քարոզած կյանքի խոսքը եւ իրենց զանազանակերպ կուռքերով Գողթնից փախչում են Մարաց կողմերը: Հավանաբար նրանց թույլ է տրվել հետները տանել այդ ծանր արձանները, այլապես գավառի իշխան Շաբիթի օգնությամբ Մաշտոցը կարող էր փշրել դրանք: Հետաքրքիր է նշել, որ Հռիփսիմյան կույսերի Հայաստան գալու ժամանակ Անձեւացյաց գավառի հեթանոս քրմերը նույնպես փախչում են Մարաց կողմերը՝ սակայն առանց կուռքերի. մատենագիրը չի հիշատակում, որ նրանք իրենց հետ տարած լինեն տեսակ-տեսակ կուռքերի արձաններ. «Եւ փախստական եղեալ դիւացն (իմա՝ քրմացն - Ա. Մ.) ի բագինն անկանէին, վայ զվայիւ աղաղակեալ: Եւ ի լեռնէ ի լեառն ոչ այլ ինչ լսիւր, բայց վայ զվայիւ ճիչեալ: [...] Եւ ի բագնացն փախուցեալք դեւքն (իմա՝ քուրմքն) անկանէին յերկիրն Մարաց» (Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, Խոր. Մատենագրութիւնք, էջ 302):

Պատահակա՞ն է արդյոք, որ հետագայում Մաշտոցն իր նորագյուտ հայերեն նշանագրերն առաջինը տարավ նույն այդ Մարաց կողմերը, ուր փախել էին Գողթան քրմերը:

Թվում է, թե հաղթությունը պետք է ցնծություն պատճառեր Մաշտոցին, բայց նա Պողոս առաքյալի նման տրտմում է իր եղբայրների եւ ազգակիցների հալածվելու համար եւ հոգոց հանելով՝ կրկնում առաքյալի խոսքը. «Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց եւ ազգականաց» (Հռովմ. Թ 2-3. «Չի տրտմութիւն է ինձ յոյժ, եւ անպակաս ցաւք սրտի իմոյ: Չի ուխտիւք խնդրէի, ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց իմոց եւ ազգականաց ըստ մարմնոյ»):

Եվ միայն այստեղ՝ Կորյունի շղարշված խոսքից հազիվ կռահում ենք, որ Մաշտոցի գործունեությունը Գողթն գավառում, քրիստոնեական քարոզչությունից զատ, այլ նպատակ էր հետապնդում, եւ դա Կորյունն արտահայտում է իրեն հատուկ ծածկամտությամբ: Նա պատմում է. «Նոյնպէս առաւել հոգի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ. եւ առաւել աղօթս մշտնջենամռունչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս [...]: Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ եւ թակարդապատեալ եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՛ արդեօք ելս իրացն գտանիցէ» - «[Մաշտոցը] մտքում դրել էր նույնպես ավելի հոգալ համերկրացիներին (Այստեղ շեղվում եմ Մ. Աբեղյանի աշխարհաբար թարգմանությունից. «Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի ժողովրդին մխիթարելու մասին»: «Զհամաշխարհականս» Մ. Աբեղյանը թարգմանում է «համայն աշխարհի ժողովրդին»՝ նկատի ունենալով Հայոց աշխարհը, Հայաստանը, մինչդեռ խոսքը վերաբերում է Մաշտոցի համերկրացիներին՝ հայրենակիցներին) սփոփելուն, [ուստի] եւ ավելացրեց մշտամռունչ աղոթքն ու բազկատարած պաղատանքն առ Աստված եւ անդադար արտասուքը: [...] Եվ այնպես տրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված եւ մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՛ ելք գտնի այդ բանի համար» *(Կոր., [Ե], էջ 40-41)*:

Եվ շատ օրեր դեգերում էր այնտեղ՝ Գողթն գավառում. «Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր» (Կոր., [Զ], էջ 42): Մ. Աբեղյանը թարգմանել է. «Եվ շատ օրեր նույն [խնդրով] զբաղվելուց հետո»՝ ավելի անորոշ դարձնելով Կորյունի առանց այդ էլ սքողված միտքը: Նշանակում է՝ հեթանոս քրմերի հեռանալուց հետո էլ Մաշտոցը երկար օրեր շարունակել է իր որոնումները Գողթնում՝ քրմերի թափուր սրբատեղիներում ու քարայրներում փնտրելով գրավոր մագաղաթ, արձանագրություն, ժայռապատկեր:

Պատմահայր Մովսես Խորենացին, որ խորաթափանց կերպով կարդում է Կորյունի մանվածապատ մտքերը, պարզ ու մեկին բացատրում է, թե ի՞նչ էր <u>մտքում դրել</u> Մեսրոպը Գողթնում եւ <u>ի՞նչ ելք էր որոնում</u> հայ ազգի համար. «Վասն որոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. եւ արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր» (Խոր., Գ. ԽԷ, էջ 317: Այստեղ Մալխասյանցը թարգմանել է. «Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել (?) եւ աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր» - Խոր. (Մալխ.), Գ. ԽԷ, էջ 285: Խորենացու բնագրում խոսքը ոչ թե <u>տառեր ստեղծելու</u> մասին է, այլ հայոց լեզվի <u>նշանագրեր գտնելու</u>):

«Եվ շատ օրեր այնտեղ, նույն Գողթնում, դեգերելով, երբ Մաշտոցը վեր կացավ եկավ [Վաղարշապատ], Մեծ Հայքի սուրբ կաթողիկոս Սահակի մոտ, նրան եւս պատրաստակամ ու հավան գտավ նույն հոգսին: Եվ միանգամայն հոժարությամբ միանալով, նրանք մեծ աղոթքներով դիմում էին Աստծուն, որ բոլոր հոգիներին հասնի քրիստոսաբեր փրկությունը» (Կոր., [Զ], էջ 42 (թարգմ. իմն է):

Այնպես է ասված, կարծես մինչ այդ Կորյունն արդեն հայտնած է եղել Մաշտոցի նպատակի մասին: Խորենացին եւս հաղորդում է Գողթնից վերադառնալուց հետո Մեսրոպի հանդիպումը սուրբ Սահակի հետ, բայց հակառակ Կորյունի աղոտ ակնարկի՝ պատմահայրը հստակ հայտնում է, թե Մեսրոպը եկավ Սահակի մոտ հենց <u>հայոց նշանագրերի խնդրի առիթով</u> եւ տեսավ, որ նա ավելի եւս փափագում է դրան. եւ բազում ջանքերից հետո, երբ ոչ մի օգուտ չեղավ, նրանք դարձյալ ապավինեցին աղոթքի՝ Աստծուց խնդրելով փնտրածը: Եվ բաժանվելով իրարից՝ Մեսրոպը գնաց իր կացարանը. եւ խստամբեր վարքի անձնատուր լինելով՝ ավելի ու ավելի էին ճիգ թափում. «Առ նա (Սահակ) եկեալ Մեսրոպ յաղագս խնդրոյ նշանագրաց Հայոց՝ եգիտ զնա առաւել եւս փափագող այնմ. եւ յետ բազում ջանից եւ ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով: Եւ մեկնեալ ի միմեանց, գնաց Մեսրոպ ի դադարս իւր, եւ յանձն առեալ խստամբերութիւն վարուց ճգնէին առաւել քան զառաւել» (Խոր., Գ., ԾԴ, էջ 420):

Եվ Վաղարշապատում Հայոց աշխարհի եպիսկոպոսների <u>աշխարհաժողով</u> <u>խորհուրդ</u> ժողովվելուց հետո, որը որոշում ընդունեց «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել» (գտնել հայ ազգի նշանագրերը) (Կոր., [Զ], էջ 42: Տե՛ս նաեւ Խոր., Գ. ԾԲ, էջ 325. «եւ ելեալ [Վռամշապուհ] ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ եւ Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս, հոգալ զգիւտ դպրութեան Հայոց»: Այստեղ Խորենացին «դպրութիւն» գործածել է «նշանագիրք» իմաստով. ճիշտ ինչպես Կորյունն է հաղորդում. «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել»): Նոր միայն պարզվում է, որ հենց հայոց լեզվի նշանագրերը նկատի ուներ Կորյունը՝ գրելով, թե Գողթնում Մաշտոցը <u>մտքում դրել էր նույնպես ավելի հոգալ համերկրացիներին սփոփելու համար</u> - «Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ» (Կոր., [Ե], էջ 42):

*Շարունակելի*

***Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ***

***Բանասիրական գիտ. դոկտոր***

# ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶՂՋՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՍՈՒՔԻ ԱՂՈԹՔԸ



Ո՜վ Դու, որ անեղ ես ու անստեղծ եւ Արարիչը բոլոր արարածների, որին ոչ երկինքն է պարփակում, ոչ էլ երկիրն է բովանդակում, քանզի ավելի վեր ես, քան երկինքը եւ նրա չորս ծագերից այն կողմ եւ տեսանելի ու անտեսանելի ամեն ինչ Դու ես հաստատել, եւ Քո հրամանով են կառավարվում բոլոր արարածները:

Դու ես աղքատացնում եւ Դու բարձրացնում, հարվածում ես ու Դու էլ բժշկում: Դու ես սփոփիչը մեղքերի պատճառով հիվանդացածների: Խոնարհեցրո՛ւ, Տեր, Քո ունկը եւ լսի՛ր ինձ: Տե՛ր, որ Թագավորն ես փառքի, տե՛ս իմ տառապանքները, քանզի սաստիկ վիրավոր եմ մեղքերով, տրտմած՝ անօրենությամբ, հոգով՝ ժահահոտ, մարմնով՝ աղտոտված, եւ գարշելի ու ամոթալի տեսքով կանգնած եմ ամենատես աչքերիդ առաջ:

Եվ արդ, Դո՛ւ, Տե՛ր, քաղցր ես եւ ողորմած, մեղավորներիս համար կանչվեցիր, ինչպես ասացիր, թե՝ «Անօրենի հետ կանգնելուց այլեւս չեմ հիշի նրա բոլոր անօրենությունները, որ արեց» (հմմտ. Եզեկ. ԺԸ 21-22): Եվ արդ, ահա Քո առջեւ ընկած՝ աղաչում ու խնդրում եմ. «Մի՛ հիշիր իմ բազում մեղքերը եւ մի՛ հանդիմանիր իմ բազում անօրենությունները, որոնցով մեղանչեցի կամովին եւ ակամա, գիտությամբ եւ անգիտությամբ, խոսքով, գործով, անտեղի մտածումներով ու մեղքերի ամբողջ ծուլությամբ: Քանզի Դու, Տե՛ր, սովոր ես գթալ եւ թողություն շնորհել բազում մեղքերին: Այլեւ առատաբուխ շնորհիցդ հագեցրո՛ւ քաղցյալիս եւ լիացրո՛ւ ծարավյալիս, որ ամեն ժամ բաղձում եմ Քեզ նայել, միշտ փափագում Քո շնորհներին եւ հանապազ կարոտում Քո ողորմությանը: Մի՛ պատժիր հանցապարտների հետ, մի՛ դատիր դատապարտյալների հետ, այլ ընդունիր Քո կամքը կատարողների հետ եւ պատվիր Քո պատվիրանները պահողների հետ: Քանզի, եթե առանց ներելու քննես իմ հանցանքները, անիմաստ է ինձ համար հարության խոստումը, որովհետեւ գեհենի հուրն է իմ ժառանգությունը. քանզի եթե դատես իմ հանցավորությունը, ապա երանի կտամ մորից չծնվածներին: Այլ նայի՛ր, Տե՛ր, իմ խնդրանքներին ու պաղատանքներին եւ մի՛ մերժիր ինձ Քո ողորմությունը, քանզի մարմինս մշտապես պղծել եւ հոգիս շարունակ աղտոտել եմ ոչ միայն չար գործերով, այլեւ գարշելի մտքերով:

Եվ արդ, Տեր, մաքրի՛ր [ինձ] մեղքերից, սկզբից ի վեր [գործած] իմ անօրենություններից, սրբի՛ր, ինչպես պոռնիկին, արդարացրո՛ւ, ինչպես մաքսավորին, ողորմի՛ր ինձ, ինչպես քանանացուն, շնորհի՛ր ինձ ողորմություն, ինչպես ավազակին, եւ բնակեցրո՛ւ ինձ Քո սուրբերի դասերում եւ Քո անունը սիրողների խորաններում»:

Եվ Քեզ փա՜ռք հավիտյանս: Ամեն:

***Գրաբարից փոխադրեց***

***Սերոբ դպիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ***

***Գեւորգյան հոգեւոր ճեմարանի***

***Դ լսարանի սան***

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

## (≈1250 - ≈1314/1328)

*Սկիզբը՝ թիվ 6-8*

### ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿԵՐՊԱՐԸ

Երզնկացուց առաջ բոլորն էլ գիտակցել են իրենց թե՛ ստեղծագործական կերպարի, թե՛ բուն գործի էությունը՝ ե՛ւ 5-րդ դարի մատենագիրները, ե՛ւ հետագա շրջանի ժամանակագիրներն ու պատմիչները, ե՛ւ նրան նախորդող բանաստեղծները: Երզնկացին բանաստեղծի իր կերպարը ինքնաճանաչման բերեց ժամանակի ու միջավայրի մեջ՝ որպես բացառիկ տրվածք, դրանով իսկ ավելի որոշակի դարձրեց բանաստեղծի կերպարի նշանակությունը: Տարբեր տաղերի հիշատակարաններում նա իրեն հիշում, ներկայացնում, դիմում է այս խոսքերով. «Ես յետին եւ անպիտան, որ Կոստանդին կոչի անուն...», «Ես Կոստանդին, որ գըրեցի...», «Երկըրպագէ դու, Կոստանդին», «Կոստանդին, չէ՛ պարտ լըսել», «Աւաղե՛մ զքեզ, Կոստանդին...»: Մի տեղ նույնիսկ նրա արտաքինն է երեւում. «Է՛, Կոստանդին, բարձր պոյով» («Տաղ սիրոյ»): Իսկ «Բան յաղագս չար կնոջ՝ նախատինք...» տաղում տալիս է իր լրիվ անունը. «Թէ խնդիր լինիք անուանս անարժանի, Կոստանդին անուն կոչի Եզընկացի»:

Երզնկացուն՝ որպես ստեղծագործող, տեսնում ենք իր միջավայրի եւ այդ միջավայրի հետ ունեցած հարաբերության մեջ: «Յաղագս անգիտաց սուտ խաւսելոյ զբանս, անպիտան եւ հակառակ կալ իմաստնոց» տաղում հստակորեն երեւում է այն գորշ միջավայրը, որ բոլոր ժամանակներում միշտ էլ շրջապատել է բոլոր մեծերին: «Ի յանգէտ մարդկան ձեռաց զհոգիս էրեմ անշէջ հըրով <...> Ես չունի հանգըստութիւն 'ւ յերակ խոցիմ անգէտ խաւսով»,- ասում է նա: Այդպիսի մարդիկ՝

*Ատեն ըզմարդըն իմաստուն, յիմար կոչեն ու ծուռ ճանփով,*
*Ծածկել են ըզգործն աղէկ ու վատ անուն հանեն շուտով*
*Եթէ սուրբ 'ւ առաքինի լինին ոմանք բոլոր սըրտով,*
*Են նոցա խիստ հակառակ, ով է անսուրբ ու պեղծ գործով:*

*Աղեկին վատն է ատող 'ւ ի հետ բարոյն չարն է նենգով,*
*Եւ անգէտըն ոչ կամենայ զմարդն իմաստուն, որ կայ բարով.*
*Թէ խաւսիս քաղցր ի քէն եւ անոյշ բան մի երկուս յինք խըրատով:*
*Նա հեռի փախչի ի քէն եւ չընդունի զքեզ սիրով:*

Երզնկացին շարունակում է բնութագրել իմաստուն եւ անգետ մարդկանց այնպես, ինչպես աստվածաշնչյան իմաստախոսությունների մեջ է. «Իմաստունն է առաւաւտ, աւետաւոր եւ ցընծալով, Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացել յերազ քընով»: Իմաստունը արեգակի պես պայծառ է ու լուսավոր, իսկ անմիտը խավարի տուն է: Իմաստունը զորեղ է իր խելքով, բայց անգետներն են աշխարհի տերը. «Բովանդակ աշխարհս է գայլ, եւ միաբան կան մի ժողով»: Այս գայլերը այդ անգետների ոհմակն են: Այդ իսկ պատճառով.

*Լավ է ինձ մէջ գազանաց մարդակերաց բընակելով,*
*Քանց անմիտ 'ւ անիմաստ՝ որ յիս խաւսի անգէտ բանով.*
*<...> Կոստանդին, Է՞ր կաս ազատ 'ւ ի սիրտ ելնես թէզ մ'ըշտապով.*
*Վասն անգէտ 'ւ անմիտ ոմանց զքեզ է՞ր տանջես շատ ցընորով*
*Ոչ կարես հաւան պահել դու զամեն մարդ հետ քեզ սիրով:*

Իմաստունի եւ անգետի բախումն ստեղծագործող անհատի դեպքում նույնն է, ինչ հանճարի եւ ամբոխի մշտական հակադրությունը:

Երզնկացին այս իրադրությունը խորացնում է երկու բացվածքով. մեկը ստեղծագործողի ճակատագիրն է անգետների միջավայրում, մյուսը բարոյախոսական խրատն է:

«Այլոց անչափ բառձիր, որչափ քեզ ես բեռըն դըրել» տաղն ամբողջությամբ անգետ մարդկանց մեջ ընկած իմաստունի ինքնարտահայտումն է՝ իր կերպարը չկորցնելու մտահոգությամբ: Երզնկացին իրեն տեսնում է քրիստոնեական բարոյախոսության սահմաններում եւ առաջին հղված տողի տրամաբանությամբ շարունակում.

*Որով չափով չափես՝ նոյնովըն քեզ կամին չափել,*
*Որով զոք դատիս՝ նոյն դատաստան կամիս կըրել.*
*Յիմա՛ր, զամաւթ մարդոյն քան զաստուծոյն մեծ ես տեսել,*
*Է ի յահեղ ատենէն չկամիս դողալ ու սարսափել:*

Երզնկացին իր խորհրդածությունները խորացնում է խոսքի, լեզվի ուղղությամբ: Ըստ նրա՝ լեզուն նման է կրակի, որ բազում անտառ է հրդեհել, լեզուն սաստիկ հողմ է, հեղեղատ է, որ շատերի հիմքերն է կործանել, հորդ քամի է... Բանաստեղծը խոնարհության կոչ է անում, այսինքն՝ հիմարին, չարին, թշնամուն չհակառակելու է տրամադրում. «Ով քեզ յիմար կոչէ, ասա՝ Աղեկ գիտես ճանչել <...> Ով քեզ չար կամենայ, պարտ է բարի հատուց անել...»:

Հոգեւոր եւ աշխարհիկ եզրերի մեջ ինքնաճանաչումը խորանում է «Կրկնեալ պատասխանի այսպէս ի դէմ» տաղում, որի մեջ վերջնականապես ձեւակերպվում է հոգու եւ մարմնի հավասարարժեք ու հավասարակշիռ գոյությունը.

*Հոգիս խիստ յաւժար բանից իմաստնոց լըսել.*
*Մարմինս է հեշտասէր, զի յաշխարհիս է ինք ծընել.*
*Ի յերկուքիս միջին մոմ եմ՝ ի մէջ հըրոյն վառել,*
*Անհիմն ու անհաստատ՝ եմ անհանգիստ ի շուրջ եկել:*

Բայց այս վիճակը նրա համար դեռեւս հաստատուն չէ, ուստի «Ի չորս հակառակէս ուսկամ յերեր եմ մընացել». դա այդպես է, որովհետեւ նա չի կարող իրեն տեսնել երկու տիրոջ ծառայի վիճակում:

«Յաղագս եղբայրութեան, բարւոյ եւ չարի» տաղը Երզնկացու գանգատն է՝ որպես խրատ լսողներին: Այստեղ դարձյալ իմաստունի եւ հիմարի, բարու եւ չարի շարունակվող պայքարն է: Այդ նույն մոտիվն առկա է նաեւ «Բան Կոստանդեայ առ մեր հոգեւոր եղբայրն Ամիր, հոգով ի հոգի եւ սրտէ ի սիրտ» տաղի մեջ: Պարոն Ամիրը նրան սիրելի եղբայր է, որն իր խոսքի գինը կարող է հասկանալ, իսկ այդ խոսքն անգետ մարդու համար դառը թույն է: Անգետ մարդու միտքը տկար է, ուստի խոսքը նրա համար նույնն է, ինչ մարգարիտը խոզերի առջեւ: Երզնկացին եղբայր ամիրին խորհուրդ է տալիս հեռու մնալ այդպիսիներից. «Ի յանգէտ մարդոյն փախիր, յիրմէն ի զա՛տ կաց ու հեռի, Մի՛ իրենըն հաւատալ, որ նենգութեամբ քեզ խոնարհի...»: Բանաստեղծությունն ավարտվում է միտքն ընդհանրացնող բարոյախոսությամբ.



*Ով ունի իմաստութիւն, թող առ մարդիկ շատ չըխաւսի,*
*Ով չունի սէր ընկերի թող լեզուովըն մարդ չըդատի,*
*Ով չըկարէ սիրտ մի տըրտում ուրախ պահել, նա է՞ր գովի:*

Ասես նախորդների անմիջական շարունակությունը լինի «Բան յաղագս չար ընկերաց եւ պատրաստ կալ մոլորեցուցիչ ոմանց որք հակառակին բարութեան» տաղը: Դարձյալ արդարացի խորին հիասթափության շրջապատից, մարդկանց ակնհայտ երկերեսանիությունից, երբ ժպիտի տակ մահվան դեղ են պահում: Այս կապակցությամբ հիշում է Աբելի ու Կայենի առասպելը, նորից ներկայացնում իմաստունի չհասկացվածության ողբերգությունը. «Տեսնուն զոմն իմաստուն յայս աշխարհիս ու մարդ արդար, Յիմար կոչեն նորա եւ ի խելացն ասեն տըկար...»: Այնուհետեւ. «Գիտունն ի յանգիտաց մէջըն ծառայ է չարաչար», որ նույնն է, թե անգին գոհարը «խամ» ապակու պես էժան գնահատվի: Այս դժգոհությունը շրջապատից վերածվում է ժամանակի դժգոհության, որովհետեւ հիմարների միջավայրը վերին օղակներում էլ է հիմարներ կարգում:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

## (1066-1105)

*Սկիզբը՝ էջ 3*

Ահա այս Սմբատի դեմ հանդես եկավ Արջուկ անունով իշխանը եւ դիմեց Փիլարտոսի օգնությանը, սակայն վերջինս, գրավելով Ուռհան, սկզբում բանտարկեց Սմբատին եւ Արջուկին, իսկ հետո էլ սպանել տվեց նրանց՝ իբր չար վարքի համար: Սակայն սա, դժբախտաբար, հայոց իշխանի վերջին հաջողությունն էր: Եգիպտական ամիրա Սուլեյմանը նրանից խլեց Անտիոքը, Կիլիկիան եւ Ասորիքը, Բուղաջի անունով մեկ այլ ամիրա՝ Ջահան գավառը, որի մեջ էր Հոնին: Թեոդորոս Ալախոսիկը հայտնվեց Փիլարտոսի սահմաններից դուրս, եւ երբ Փիլարտոսը նրան առաջարկեց տեղափոխվել իր տիրույթները, ընդդիմացավ նրան: Փիլարտոսը մտածեց նոր կաթողիկոս հաստատել, սակայն Կարմիր լեռան առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը մերժեց նրա առաջարկը: Իր համաձայնությունը տվեց Վարագա Սուրբ Նշանի վանահայր Պողոսը, որը Մարաշում, համաձայն Ուռհայեցու, Փիլարտոսի կամքով, բայց ոչ՝ Աստծու, կաթողիկոս ձեռնադրվեց: Դրան հաջորդեց պատերազմն Ալփ-Ասլանի որդի Դդուշի եւ Սուլեյման ամիրայի միջեւ, որտեղ Դդուշը հաղթեց, սակայն Փիլարտոսի վիճակն էլ վտանգվեց: Նա որոշեց մեծ ընծաներով ներկայանալ Մելիքշահին եւ Ուռհայում իրեն փոխանորդ նշանակելով Պարականանոս անունով մեկին՝ 1086 թվին մեկնեց Պարսկաստան: Սակայն Բարսումա անունով մի իշխան սպանեց Պարակամանոսին, եւ Մելիքշահը, դրա համար պատասխանատու ճանաչելով Փիլարտոսին, նրան զրկեց իշխանությունից: Իր իշխանությունը պահպանելու համար Փիլարտոսը մահմեդականություն ընդունեց, սակայն ոչինչ չհասավ: Նա վերադառնալով կրկին քրիստոնյա դարձավ եւ վանք մտավ եւ շատ չանցած՝ կնքեց իր մահկանացուն՝ անհայտության մեջ: Նա ուրացավ քրիստոնեությունը 1087-ին, սակայն մահվան թվականը հայտնի չէ:

Կրկին մեծ ցնցումներ կրեց Հայոց Եկեղեցին: Հայրապետական աթոռը կորցրել էր իր միասնությունը, ամենուրեք հանդես էին գալիս նոր կաթողիկոսություններ, որոնցից մեկն էլ հաստատվեց Մարաշում՝ վերը նշված Պողոս Վարագցու կաթողիկոս ձեռնադրվելով: Դրանց թիվը, ըստ Ուռհայեցու, սկզբում հասավ չորսի, իսկ հետո՝ վեցի: Լուրջ քննության դեպքում չի բացառվում, որ այդ թիվը կարող է աճել: Այսպես թե այնպես՝ 1085-ին կաթողիկոս էին Գրիգոր Վկայասերը՝ որպես հիմնական հայրապետ, Բարսեղ Անեցին, Թեոդորոս Հոնեցին եւ Պողոս Վարագցին՝ Մարաշում: Գեորգ Լոռեցին տակավին ապրում էր Տարսոնում՝ կրելով կաթողիկոս անունը: Կաթողիկոս անունով է հիշվում անգամ Վկայասերի քեռորդին՝ Գրիգորիս եպիսկոպոսը, որը կաթողիկոս պատվանունը կրում էր Եգիպտոսի պատրիարքական աթոռ լինելու պատճառով: Բայց չմոռանանք, որ Հայոց Եկեղեցու մաս կազմող՝ Հայոց Արեւելից կողմերի առաջնորդությունը կրում էր այսպես կոչված Աղվանից անունը: Մի ութերորդ կաթողիկոսություն էլ կար Վանա լճի Աղթամար կղզում: Իհարկե վերջինս, որ կաթողիկոսություն էր դարձել շնորհիվ Արծրունյաց թագավորների բռնած դիրքի, այդպես էլ ինքնուրույն կաթողիկոսության չվերածվեց, չնայած Աղթամարում մինչեւ իսկ կաթողիկոսների անվանական ցանկ կազմվեց «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց» տետրակում: 993 թ. Հավաքարանը Նարեկացու օրերում Աղթամարի կաթողիկոս է հիշում Դավիթ Բ Աբդլմսեհյանին, սակայն այն թերեւս շփոթված է 1097-ին հիշատակված Դավիթ Աբդլմսեհյանի հետ, որը նույն ինքը 1114-ին հակաթոռ հռչակված Դավիթ Թոռնիկյանն է: Հասկանալի է, որ 993-ին կաթողիկոսացածը հազիվ թե կարողանար 1114-ին կենդանի լինել եւ հայրապետել 121 տարի: Իրականությանը չեն համապատասխանում նաեւ Բարսեղ Անեցու՝ իբր Աղթամար փախչելը եւ քողն ու աջն այնտեղ թողած լինելու պատճառով Աղթամարին կաթողիկոսության իրավունք տալը, քանի որ Բարսեղ Անեցին ո՛չ քող ուներ եւ ո՛չ էլ՝ աջ, ու ընդամենը կաթողիկոսի աթոռակիցն էր Անիում: Այս քննությունից լոկ մի բան կարելի է եզրակացնել, որ Աղթամարում կաթողիկոսությունը, գործելով Վասպուրականի տարածաշրջանում, գոյություն ուներ, սակայն պատմությունը չի պահպանել մեզ հետաքրքրող ժամանակի գործող անձանց անունները:



Ինչ վերաբերում է օրինական հայրապետ Գրիգոր Բ Վկայասերին, ապա չնայած այն կարծիքներին, թե նա կրկին գնացել է Եգիպտոս, պետք է ենթադրել, որ մեզ հետաքրքրող ժամանակներում գտնվում էր Սեւ լեռան վանքերից մեկում՝ իրեն նվիրելով ճգնության եւ գրական զբաղմունքների: Նրա բռնած տարօրինակ կեցվածքը նույնպես, չնայած քաղաքական վայրիվերումների, անշուշտ էական դեր կատարեց բազմաթիվ կաթողիկոսությունների հանդես գալու համար: Միանգամայն իրավացի է Մ. Օրմանյանը՝ գրելով, թե այդ ամենը տեղի չէր ունենա, եթե Գրիգոր Բ Վկայասերը կաթողիկոսի անվան հետ հայրապետական գործերն էլ իր վրա վերցրած լիներ: Ըստ որում, դրա համար նա ուներ ե՛ւ փայլուն կրթություն, հմտություն ու փորձառություն, ե՛ւ թե՝ ազդեցություն ու համակրություն, սակայն նա իրապես չկարողացավ եւ անգամ չփորձեց էլ հոգեւոր իշխանությունը վարել եւ տեր կանգնել իր հոտին:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

*Սկիզբը՝ էջ 3*

1940-45 թթ. Պարույրը սովորում է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում: Շատ բան է հասկանում այստեղ՝ հայտնվելով գրական ու գիտական միջավայրում. ուներ հմուտ ուսուցիչներ, Հրանտ Թամրազյանի, Վահագն Դավթյանի, Հրաչյա Հովհաննիսյանի նման դասընկերներ: Դասախոսություններից ու գրադարանային ընթերցումներից հաջորդում էին հաճախ մինչեւ լուսաբաց տեւող գրական զրույցներն ու բանավեճերը:



*Գործ՝ Ս. Մուրադյանի*

Առաջին բանաստեղծությունները տպագրել է 1942-ին «Սովետական գրականություն եւ արվեստ» ամսագրում: Խմբագիր Ռուբեն Զարյանը, տեսնելով տաղանդավոր երիտասարդի թարմ, ինքնատիպ ու հանդուգն մտածողությունը, նրան առաջարկում է **Պարույր Սեւակ** գրական անունն այն բարի մտադրությամբ, որ գուցե Եղեռնի ժամանակ զոհված բանաստեղծներից մեկին, ասենք Ռուբեն Սեւակին, նա փոխարինի:

1945-ին գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ Պ. Սեւակն աշխատում է «Ավանգարդում», ապա եւ «Գրական թերթում»՝ որպես պոեզիայի բաժնի վարիչ, ընդունվում է ասպիրանտուրա՝ որոշելով լրջորեն զբաղվել հայոց հին եւ միջնադարյան գրականության ուսումնասիրությամբ: Սակայն շուտով ամպեր են կուտակվում նրա գլխին. կար բանտարկության լուրջ սպառնալիք, եւ սրտացավ մտերիմների խորհրդով նա 1951-ին տեղափոխվում է Մոսկվա, ընդունվում Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտ, որն ավարտելուց հետո՝ մինչեւ 1959 թ., նույն հաստատությունում աշխատում է որպես դասախոս: Մտերմիկ զրույցների ժամանակ երբեմն իրավացիորեն պարծենում էր. «Մարդ այնքան ուժեղ պիտի լինի, որ ռուս գրողներին ու թարգմանիչներին իրենց մայրենի լեզվի՝ ռուսերենի նրբությունները սովորեցնի»:

Դժվարին էր Պ. Սեւակ բանաստեղծի ինքնահաստատման ուղին: Առաջին ժողովածուն՝ «Անմահները հրամայում են» խորագրով, լույս տեսավ 1948 թ.: 1953-ին հրատարակեց կոլխոզային կյանքը պատկերող մի պոեմ՝ «Անհաշտ մտերմություն» վերնագրով, հետո՝ «Սիրո ճանապարհը» (1954) խորագրով մի գիրք: Բայց երիտասարդ բանաստեղծը մինչեւ 1957 թ. լույս տեսած «Նորից քեզ հետ» ժողովածուն մնում էր գրեթե աննկատ, որովհետեւ այդ ժամանակներում մարդկանց հետ միասին բռնադատվում էր միտքը, ազգային գաղափարախոսությունը, կաղապարվում գեղարվեստը, ավելի ճիշտ՝ բռնադատվում էին հենց միտք ունեցող մարդիկ, մանավանդ նրանք, ովքեր չէին տեղավորվում խորհրդային քանոնով ու կարկինով գծված սահմաններում: Իսկ Պ. Սեւակը նախապատրաստվում էր ստեղծագործական մեծ թռիչքների, սակայն ապրում էր մի տեսակ ներքին հարստացման ու կուտակումների շրջան ու դեռեւս բացվելու, ընթերցողի հետ անկեղծ խոսելու եւ իր բանաստեղծական էությունն անկաշկանդ դրսեւորելու հնարավորություն չէր ստացել: «Իմ կյանքի լավագույն տասնամյակը անցավ ինքնամաքառման մեջ. ամեն ինչ գնաց երկու բանի վրա: Նախ՝ դիմանալու: Դիմացա, բայց ի՞նչ գնով: Իմ տասը տարվա աշխատանքը մնաց գզրոցում. իր ժամանակին՝ չէր կարելի, իսկ հիմա չարժի... ***Ահա թե ինչու իմ կյանքի լավագույն տասնամյակը գնաց ոչ միայն դիմանալու, այլեւ ... հարկադիր համակերպության վրա: 50-ական թթ. սկզբին ես զբաղված էի սիզիֆյան աշխատանքից էլ դժվարին գործով... աշխատում էի ձայնս փոխել***...(նույն տեղում, էջ 73, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

## (≈1250 - ≈1314/1328)

*Սկիզբը՝ էջ 5*

Երզնկացու դժգոհությունն ասես համահունչ է Ֆրիկի բողոքին, եւ սա տարօրինակ չէ, որովհետեւ նրանք ըստ էության ժամանակակիցներ են: Երզնկացին գրում է.

*Յազար աւաղ տամ ես, որ Տէրն ըզմեզ յետնորդս արար*
*Ի յանցեալ ժամանակիս՝ որ մեզ չըկայ իրք մըխիթար.*
*Յովիւ չունինք տեսող, ու մենք ենք մոլորեալ ոչխար,*
*Շատ գայլք են յարձակել ի վերայ մեր խիստ անհամար:*

«Պիտեր մեզ նաւապետ մարդ կենդանի՝ զերդ Նոյ արդար...»,- շարունակում է բանաստեղծը՝ երազելով փրկության մի նոր տապան: Կա՛մ Աբրահամի պես աստվածատես մի մարդ էր պետք, կա՛մ երթի մի նոր Մովսես, պետք էին ուրիշները: Եվ բանաստեղծը, տեսեք, պատկերային ի՜նչ հայտնության է հասնում.

*Երանեմ քե՛զ, ժամանակ, որ դու ըզմեզ Տէրն տեսար*
*<...> Իսկ ի յայս ժամանակիս, որ Տէրն ըզմեզ յետնորդս արար,*
*Չունինք մարդ կենդանի, հոգւով մեռած ենք հաւասար,*
*Ունինք տեսող աչեր, մեղաւք գընանք յանլոյս խաւար,*
*Ի մէջ ծովուս ծըփինք, ոչ նաւ ունինք, ոչ նաւավար:*

Սա անհայտության մատնված ժամանակն է, այն մահացու քրոնոսը, որը խժռում էր իր զավակներին: Երզնկացին, ըստ այս եւ համանման մյուս բանաստեղծությունների, ներկայանում է իր ժամանակի զոհի կերպարանքով, ինչն ստանում է հանրային հնչեղություն: Նրա ձայնը, ճգնախուցի պատերին բախվելով, արձագանքում է ժամանակի մեջ: Պատահական չէ, որ հերթական անգամ ինքն իրեն ասում է.

*Չհոգիդ քանի՞ մաղես, Է՛, Կոստանդին, զաւրն անդադար,*
*Յերիք արա սըրտիդ, զքեզ ի ծովուդ մէջըն տեսար,*
*Դարձիր ի յետ նայէ ու գիր խելաւք թատպիր ու ճար,*
*Որ չմնաս ի մէջ ծովուն 'ւ յեզր ի հանգիստ խսկի չհասար:*

Երզնկացին իր կյանքի օրինակով կրկնում է աստվածաշնչյան հայտնի ասույթը, ըստ որի՝ ով իր գիտությունն է ավելացնում, իր վիշտն է շատացնում: Յակառակ դեպքում այս մոտիվն այդքան խորությամբ չէր արտահայտվի նրա ստեղծագործության մեջ: «Նորին Կոստանդեայ բանք» տաղն այս մտքի ձեւակերպումն է՝ Սողոմոն իմաստունի անվան հիշատակությամբ: Նաեւ կրկնվում են հայտնի խորհուրդները. «Քանի հասնիս ի մեծութիւն՝ խոնարհ կացիր մարդկան ու ցած, Որչափ լինիս դու իմաստուն՝ շատ մի՛ խաւսիլ մէջ անգիտաց»:



Նույն տարերքի ծնունդ է «Խրատ հասարակաց պիտանի եւ աւգտակար» տաղը, որի մեջ նրա հայտնած մտքերը նորանոր նրբերանգներով ու ձեւակերպումներով են ներկայանում: Այսպես. «Խոնարհութիւնն՝ արդարութեամբ, հիմն է հաստատ, անխախտելի, Չի որ խոնարհ է ի յերկրի, նա աստուծոյ որդի կոչի...»:

«Բանք յաղագս անցաւր մեծութեան, զի մահուան ժառանգ են երկրաւորքս եւ ունայն է վայելչութիւն աշխարհիս» տաղը վերստին նույն տրամադրություններն է արտահայտում, բայց այլ եղանակով եւ այլ բովանդակությամբ: Ըստ հեղինակի ծանուցման՝ մեկը «Շահնամայ ասէր ձայնով»: Եղբայրության անդամները («եղբայրք») նրան խնդրում են, թե «ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի զբանքս զայս. ի Շահնամայի ձայն կարդացեք»: Խոսքը Ֆիրդուսու «Շահնամե»-ի մասին է, որ երգվել ու արտասանվել է: Երզնկացու այս տաղում նախ փոխված է չափը, որը տատանվում է 11 (5+6) եւ 12 (6+6) տողերի եւ համապատասխան անդամների միջեւ *(այս մասին Մ. Աբեղյանը գրել է մի առանձին ուսումնասիրություն՝ «Շահնամայի ձեւական ազդեցությունը», որի մեջ, սակայն, Երզնկացու տաղի չափական կշռույթի բացատրությունը հեռանում է բնագրային համապատասխանությունից (տե՛ս Երկեր. հ. Դ, 1970, էջ 467-469): Աբեղյանն ունի նաեւ համանման մեկ այլ ուսումնասիրություն՝ «Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» (տե՛ս Ֆիրդուսի. Նյութերի ժողովածու, Ե., 1934, էջ 117-128)*, ապա նաեւ փոխված է հանգավորումը, որը միահանգ հնչեղության փոխարեն բերում է բազմահանգություն. քառատողերն ունեն կից հանգավորում՝ աաբբ գգդդ եեզզ եւ այսպես շարունակ: Սա ավելի աշխույժ եւ ներդաշնակ կշռույթ է:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

**ԻՈՀԱՆ ԱՐՔ.**
**ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ**
**(ՇԱԽՈՎԱՍԿՈՅ)**

# ՄԵՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎԱՐՔ

*Սկիզբը՝ 2005-ի*
*թիվ 16-18, 23-24, 2006-ի թիվ 2, 5-6, 8*

Եթե երկրի վրա, քաղաքական հասարակարգերի փոփոխության ժամանակ, մարդիկ այդքան տառապում են ընկած հասարակարգին իրենց կապված լինելու պատճառով եւ այդքան հաճախ դողում՝ կանխազգալով մոտալուտ դատն իրենց հանդեպ, ապա որքա՜ն առավել է սա տեղի ունենում մարդու կյանքում այս աշխարհի ամբողջ «հասարակարգի» անկման ժամանակ... Չէ՞ որ այդ անկումը ոչ միայն կանխատեսվել է Աստծո կողմից, այլեւ հավաստվում է երկրային բոլոր սերունդների փորձով:

Մենք այժմ, աշխարհի բոլոր երկրներում, ապրում ենք հին հասարակարգի պայմաններում: Գալիս է, չի հապաղում «նոր հասարակարգը»՝ նո՛ր կարգը, նո՛ր իշխանությունը՝ Աստծո օրենքների բացարձա՛կ իշխանությունը: Հեռատես է նա, ով հավատացել է այս ճշմարտությանը: Փոփոխությունը կարող է տեղի ունենալ ամեն պահի՝ գիշերը, քնած ժամանակ կամ ցերեկը փողոցում... Սակայն մարդու լավագույն մահն իհարկե այն է, որը գալիս է պատրաստվելուց հետո՝ այս ժամանակավոր գոյության բոլոր արժեքների մեռնելու եւ մարդու՝ հոգու աշխարհում ծնվելու հստակ գիտակցությամբ: Ամեն մարդ նախօրոք պետք է մտերմանա այն իմաստուն ու բարի իշխանությունների հետ, որոնք գալիս են փոխարինելու այս աշխարհի մեղսական եսասիրական իշխանություններին՝ այս առժամանակյա կյանքի կրքերին:

Խիստ կապված լինելով այս դարաշրջանի «հին հասարակարգին»՝ մարդը դառնում է Աստծո դեմ պատերազմի մեղավոր: Այն, ինչ մեր աչքերի առաջ տեղի ունեցավ համաշխարհային պատերազմից հետո պարտվածների եւ նրանց իշխանությունների հետ, միայն առակն է նրա, ինչ պիտի տեղի ունենա, երբ այս ամբողջ աստվածամարտ աշխարհը <u>պարտվի Աստծո դեմ պատերազմում</u>: Մահվան պահին մեր անձի ողջ էությունը պիտի մինչեւ վերջ բացահայտվի: Ամեն մութ ու անմաքուր բան պիտի հանենք մեր վրայից, ինչպես անպետք հագուստը: Մետաֆիզիկորեն մերկացած, ծայրաստիճան աղքատացած, խպառ ոչնչացած եւ միայն Աստծո մեջ երանություն գտնելու հնարավորությամբ է, որ պիտի կանգնենք մյուս աշխարհի ճշմարտության առաջ... «Քո խորհրդավոր ընթրիքին, Որդի՛ Աստծո, հաղորդակի՛ց ինձ դարձրու»: Վախերը լինում են միայն Գեթսեմանիում, պալատում, Կայիափայի տանը: Այնուհետեւ գալիս է Ավագ շաբաթ օրը՝ հանգիստ բոլոր վախերից, եւ ապա՝ կիրակին՝ չհանգչող Լույս:

Վախից ազատագրման՝ ոչ մի բանի հետ չհամեմատվող երանությունը Աստծուն հավատարիմ մարդը ստանում է մահվան մահճում:

Եկեղեցու աղոթքները մեծ իրականություններ են բացահայտում: Հոգեւարքի կարգի մեջ, մեռնողի անունից, Եկեղեցին նրա համար մխիթարություն է խնդրում: Մեռնող մարդկանց հոգեւոր հանգստի, խաղաղության աստիճանները տարբեր են: Իր հանդեպ Աստծո ողորմության իրական հավաստիացումը մյուս աշխարհից ստացած անձը, ով ապաշխարությամբ ու ս. Խորհրդի հաղորդությամբ պատրաստվել է այս աշխարհից հեռանալուն եւ ով երբեմն լսում է արդեն հրեշտակներին՝ մեծ լռության մեջ, անսահման ու բարձր ուրախությամբ ի Տեր, այս աշխարհի համար մեռնող մարդը՝ մուտք է գործում ահավոր ու անպատմելիորեն սքանչելի հավիտենություն: Հնարավոր չէ նկարագրել, թե որքան վեհություն կա մաքրված, արդարացած ու բոլոր վախերը հաղթահարած մարդու՝ այս աշխարհից հեռանալու մեջ:

*Շարունակությունը՝ էջ 8*

## Կ ենցյակում

# ՏԱՌԱՊԱՆՔԸ՝ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

### Մեր հյուրն է Ջրվեժի Սբ Կաթողիկե եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Կյուրեղ քհն. ՏԱԼՅԱՆԸ



**- Վիշտ եւ տառապանք. մեր ժողովրդին շատ ծանոթ ապրումներ, գրեթե կենսակերպ, ցավոք թե բարեբախտաբար: Ավելին. կարծես նրա կյանքի, կեցության մշտական ուղեկիցները՝ իր ողջ պատմության ընթացքում: Հավաքական առումով կրողն ենք եղել նաեւ նախադեպը չունեցող մեծագույն ողբերգության՝ 20-րդ դարասկզբի ցեղասպանության: Փորձենք հասկանալ, թե ինչ ասել է վիշտ, տառապանք՝ քրիստոնյայի համար, քրիստոնեական ընկալմամբ:**

- Վերջերս ձեռքս ընկավ 12 տարեկան մի աղջկա գրած բանաստեղծություն, որն ինձ խորապես հուզեց: Որքան հուզիչ, նույնքան եւ ուսանելի է բոլորիս համար այն, որ փոքրիկ մի աղջնակ, որի դեմքը ծայրաստիճան աղավաղված է այրվածքներից, պարզ ու անպաճույճ բառերով Տիրոջ ողորմությունն է հայցում եւ հավատում է, որ Նա իրեն կօգնի.

*...Իմ աղոթքներին կպատասխանի,*
*Պարզապես պետք է մի քիչ համբերել...*

Այսինքն՝ նույնիսկ երեխաները նման ծանր վիճակներում դիմում են Տիրոջը եւ Նրա ողորմությանն ապավինում, որովհետեւ ունեն հավատ, հավատ հավիտենական կյանքի, հարության հանդեպ: Սա ինքնին փաստում է, որ հուսահատության հիմքում, վշտի ու նեղության մեջ Աստծուց չգոհանալու հիմքում Աստծուն չճանաչելն է: Աստված, որ անընդգրկելի է, հոժարեց Ինքն Իրեն տեղավորել ժամանակի ու տարածության մեջ եւ ծնվեց որպես մարդ, ծնվեց ու ապրեց մարդկանց մեջ՝ կրելով այն ամենը, ինչ բնորոշ է մարդուն՝ բացի մեղքից: Իր մեջ կրեց տառապելու ու չարչարվելու հատկությունները, եւ նույնիսկ հանձն առավ խաչի վրա մահն ընդունելու՝ մարդկության փրկության համար: Ուրեմն, եթե մարդը ճանաչում է Աստծուն, եթե իր ողջ էությամբ գիտակցում է Աստծու մեծագույն ողորմությունը, Նրա մարդասիրությունը, զոհաբերությունը հանուն իր փրկության, մի՞թե կարող է անշնորհակալ լինել, մի՞թե կարող է չգոհանալ Աստծուց ցանկացած պարագայում, մինչեւիսկ ծանրագույն նեղությունների մեջ:

Աստծուն չճանաչելու արմատները, ցավոք, ավելի խորն են, եւ դա հաճախ բխում է այլ գիտակցությունից. ասենք, մարդիկ գալիս են մկրտվելու, եւ երբ հարցնում ես, թե ինչի՞ համար են ուզում մկրտվել կամ Աստծու օրհնությունը ստանալ, ասում են. «Որ հաջողություն ունենամ»: Ես անմիջապես հարցնում եմ նման մարդուն. «Ի՞նչ ես կարծում, քո եւ մեր Տերը, մեր Փրկիչն այս կյանքում, այս աշխարհում եւ այս ժամանակի մեջ հաջողա՞կ էր, թե՞ անհաջողակ...»: Մարդկային չափանիշներով, անշուշտ, անհաջողակ էր. «Աղվեսները որջ ունեն, եւ երկնքի թռչունները՝ բույն. բայց մարդու Որդին մի տեղ չունի, որ իր գլուխը դնի» (Մատթ. Ը 20):

**- Ընդ որում, «հաջողություն» բառը կարծեմ երկրորդ իմաստ չունի՝ մարդկային ընկալումով...**

- Այո՛: Միանգամից պարզ է դառնում, որ խոսքն ինչ-որ աշխատանք գտնելու, նոր ձեռնարկած գործի կամ նման մի բանի հաջողության ակնկալիքի մասին է: Այդ ամենը, անշուշտ, կարեւոր են մարդու համար, բայց մեր Տերը մեզ սովորեցրել է «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. Զ 33): Այնինչ տեսնում ենք, որ մարդիկ հաճախ բացարձակ անտեղյակ են այս ամենին, եւ նրանց այս կյանքից զատ եւ այս կյանքից դուրս այլեւս ոչինչ չի հետաքրքրում: Կարո՞ղ է լինել կյանքի ավելի տխուր եւ թյուր ընկալում: Սա ոչ միայն մակերեսային, այլեւ ամենաողորմելի ընկալումն է կյանքի: Պողոս առաքյալն ասում է. «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ» (Ա Կորնթ. ԺԵ 19):

Ինչ վերաբերում է նեղություններին, ծառայությանս բերումով բազում մարդկանց հետ շփվելով՝ տեսնում եմ, որ նրանց, նույնիսկ հավատացյալ քրիստոնյաների մեծ մասը չի սովորել նեղության, դժվարության, տառապանքի մեջ Աստծուց գոհանալ: Բայց, փառք Աստծու, լինում է եւ հակառակը. ինձ կանչել էին մի երիտասարդ տղայի մոտ, որը գոտկատեղից ներքեւ անդամալույծ էր. ողնաշարն էր վնասվել բանակում: Եվ գիտե՞ք... ես գնացել էի՝ իրեն մխիթարելու, եւ... ե՛ս մխիթարվեցի. այնքա՜ն լույս, այնքա՜ն հավատ տեսա նրա մեջ: Կա՜ն այդպիսի մարդիկ, մինչդեռ շատերը փոքր-ինչ նեղության դեպքում ասում են. «Ես հավատում էի, բայց քանի որ այսպես եղավ, այլեւս չեմ հավատում»: Ի՞նչ հավատ է դա, որ կարող է առեւտրի վերածվել:

**- Այս տեսակետից հավանաբար խիստ տարբեր են նաեւ մարդկային ըմբռնումները *բախտավոր* եւ *դժբախտ* եզրերի վերաբերյալ: Ո՞վ է բախտավոր, ո՞վ է դժբախտ այս կյանքում:**

- Բախտավոր է նա, ով Աստված է գտել, նա, ով Քրիստոսի հետ է քայլում: Մեր շուրջը քիչ չեն այս աշխարհի ընկալմամբ բախտավոր մարդիկ, ովքեր ունեն ամեն բան՝ շքեղ տուն, աշխատանք, հարստություն, բայց կործանված անձեր են, որովհետեւ դատաստանի օրը պիտի կանգնեն Տիրոջ առջեւ գլխահակ:

Բախտավոր մարդ էր «Աղքատ Ղազարոսի» առակի մեծահարուստը: Աշխարհի տեսանկյունից՝ այո՛. ամեն օր՝ կերուխում, ուրախություն: Վերջն ի՞նչ եղավ՝ հայտնի է: Հաճախ որեւէ հանգուցյալի մասին ասում են. «Շատ լավ մարդ էր՝ ուտող-խմող»: Ահա այսպես՝ ուտել-խմելը շատ հաճախ լավ մարդ լինելու եւ բախտավորության հոմանիշ է դառնում: Եվ ուրեմն, եթե նման չափանիշներով դատենք, ապա ովքե՞ր են քրիստոնյաները. վատ մարդիկ, որովհետեւ ուտել-խմելը չէ նրանց կյանքի նպատակը:

**- Ինչո՞ւ շատերը Աստծուն հիշում են միայն նեղության պահին: Այլ դեպքերում՝ առօրյա կյանքում, թվացյալ երջանկության պարագայում Աստված դուրս է նրանց ուշադրության տիրույթից:**

- Ես մի ընկեր ունեի, որ Աստծու հետ հաշտվեց կամ, ինչպես Դուք ասացիք, Աստծուն հիշեց միայն այն ժամանակ, երբ անբուժելի հիվանդ էր: Այս կյանքից նա հեռացավ՝ Աստծու հետ հաշտված: Այդ մարդը բախտավո՞ր էր, թե՞ դժբախտ: Իսկ եթե չհիվանդանա՞ր... Անշուշտ, ճիշտ չէ «եթե»-ներով խոսել հոգեւոր իրողությունների մասին, բայց միշտ պետք է քաջ գիտակցել, որ Աստված տեսնում է, թե ինչ պետք է այս մարդուն, ինչը կարող է նրան արթնացնել, մղել Աստված որոնելու... Մի այլ օրինակ. գալիս է ծանր հիվանդությամբ տառապող մի կին եւ Աստծուց դժգոհում: Երբ հարցնում ես, թե քանի՞ անգամ է իր որովայնում երեխա սպանել, պարզվում է՝ շա՜տ... «Ի՞նչ ես կարծում,- հարցնում եմ,- եթե քո արարքն այս աշխարհի օրենքներով մարդասպանություն համարվեր, քեզ ի՞նչ պատիժ պիտի հասներ»: Ասում է՝ պիտի գնդակահարեին:

Մեզ ի՞նչ է մնում. խնդրելով խրատել այդ կնոջը՝ ասելով. «Կի՜ն, դու ընդամենը մի ինչ-որ հիվանդությունից տառապում ես, եւ դա Աստծու մեծագույն ողորմությունն է քո հանդեպ, որ պարտավոր ես ընդունել որպես հատուցում քո գործած բազում մեղքերի եւ շնորհակալ լինել Աստծուն: Մի՞թե այս փոքրիկ տառապանքը գերադասելի չէ հավիտենական տանջանքներից:

**- Կարո՞ղ ենք հետեւություն անել, որ հիվանդությունը եւ ընդհանրապես՝ տառապանքը հաճախ դառնում է հոգեւոր մաքրագործման առիթ եւ միջոց մարդու խոնարհության:**

- Իհարկե: Առանց տառապանքի չկա կյանք, առանց տառապանքի չկա առաջընթաց: Որեւէ գիտական արժեքավոր հայտնագործություն տառապալից որոնումների արդյունք է: Ամենասքանչելին, սակայն, երկունքի ցավերով բռնված կնոջ տառապանքն է. կինը նեղություն է կրում, բայց երբ լույս աշխարհ է գալիս մանուկը, այն վերածվում է անպատմելի ուրախության: Էլ ի՞նչ ասել հավիտենական Լույս աշխարհին որդեգրվելու տառապանքի ու նեղության հրճվանքի մասին:

*Շարունակությունը՝ էջ 8*



# ԱՂՈԹՔՆԵՐ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԱԳՐՔԻՑ

## ՔԱՀԱՆԱՅԻ ԱՐՁԱԿՈՒՄ

**(ասվում է միայն քահանայի կողմից՝ Գիշերային աղոթքի երեք պահերի ավարտից հետո)**

*Սկիզբը՝ թիվ 4-8*

Գոհանում ենք Քեզանից եւ աղաչում Քեզ, Տե՛ր Հիսուս Քրիստոս, կենդանի Աստծո հավիտենակա՛ն Որդի, որ նախքան հավիտյանները բնակվում ես լույսի մեջ, Լո՛ւյս Լույսից, լուսավորի՛ր, Տեր, մեր միտքն ու սիրտը, պայծառացրո՛ւ մեր իմացականությունը, որ հասկանանք Քո կենարար խոսքերը: Հանի՛ր մեզ մեղքի խավարից, որ սպանում է հոգին: Արժանի արա մեզ հարատեւելու բարու մեջ եւ բարի գործերում: Քո ահավոր երկրորդ գալստյան ժամանակ, երբ դատես աշխարհը, թող արժանի դառնանք լսելու երջանկությամբ, ուրախությամբ, մխիթարությամբ, զմայլանքով ու շնորհով լի այն խոսքը՝ Քո աստվածային բերանից ելնող. «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը»:

Այո՛, Տեր Աստված մեր, մեզ արժանացրու այդ օրն ու այդ ժամին լինելու աներկյուղ, անսայթաք, անխռով, անխափան եւ անխոտոր: Մեզ հետ մի՛ վարվիր, Տեր, ըստ մեր բազում մեղքերի: Ների՛ր, Տեր, մեր բոլոր մոլությունները, սխալները, սայթաքումներն ու վրիպումները:

Ազատի՛ր, Տեր, մեզ եւ ամբողջ աշխարհը մահվանից, աղքատությունից, համաճարակներից, ավերումից, սնանկացումից, թշնամիների սրից, դեւերի դավերից, կրակի ու ջրահեղձության վտանգից, չարերի ընդդիմությունից, անամոթների մեքենայություններից եւ դատավորների անարդարությունից: Խափանի՛ր մեր դեմ համառողների գործերը: Քանզի Դու ես մեր Տերն ու Աստվածը, գթա՛ մեզ: Մեզ մի՛ գցիր կործանման ծովի մեջ կամ մեր ճանապարհների պատժի տակ: Այլ փրկի՛ր մեզ, պաշտպանիր, պահպանիր եւ ազատիր ձանձրույթից, բարկությունից, հուլությունից եւ ծուլությունից: Թող թշնամի սատանան չհաղթի մեզ չափազանցված հույսով, այլ մեր միտքը զգոն դարձրու եւ մեր սիրտն արթնացրու անուշադրության քնից եւ մեր կյանքի ունայն վատնումից:

Աստվա՛ծ, անտեսի՛ր մեր հանցանքներն ու ների՛ր մեր վրիպումները, մի՛ հիշիր մեր մեղքերն ու մոլությունները, մի՛ բարկանա մեզ վրա, եւ թող Քո բարկությունը չշարունակվի հավիտյան: Ողորմի՛ր մեզ, Տեր, ողորմի՛ր մեզ, քանզի տկար ու աղքատ ենք եւ ընկղմվում ենք մեղքի օվկիանոսի մեջ: Քե՛զ ենք կանչում, Քո առա՛ջ խոնարհվում, Քե՛զ խոստովանում, Քե՛զ ենք փափագում: Մի՛ կտրիր Քո ողորմության հանդեպ մեր հույսը, Տե՛ր իմ, եւ մեր երեսի առաջ մի՛ փակիր Քո ողորմության դուռը: Այլ Քո բարությամբ փրկի՛ր մեզ, եւ թող լսենք Քո ուրախալից ձայնը:

Աստվա՛ծ, մաքրի՛ր մեզ եւ սրբի՛ր մեր սիրտն ամեն չարությունից, անմաքրությունից ու վատ խորհուրդներից: Հեռացրո՛ւ մեզանից, Տեր, եւ Քո ամբողջ ժողովրդից բոլոր երազները, պատրանքներն ու դիվային գաղափարները: Ազատի՛ր մեզ, Աստված, ամեն անկումից ու աղետից: Աստվա՛ծ, մեր մեջ համբերություն, հույս, սեր եւ ուղղափառ հավա՛տք հաստատիր: Դասի՛ր մեզ Քո աջակողմյան ոչխարների շարքում: Նստեցրու մեզ նրանց հետ, ովքեր բազմած են Քո երկնային խնջույքում:

Ների՛ր մեր ամեն հանցանք, սխալ ու մեղք: Պաշտպանի՛ր մեզ Քո լուսավոր հրեշտակային զինվորների պարսպով: Քանզի չունենք ուրիշ փրկություն, Քո ողորմությունից բացի: Մեր ապավենը Դու ես, Քեզ ենք հավատում, եւ մեր հույսը Դու ես: Ընդունի՛ր մեզանից, Տեր, մեր աղաչանքները ներկա ժամին եւ բոլոր ժամանակներում: Եվ բոլոր նրանց՝ ողջ թե հանգուցյալ, ովքեր խնդրել ու մղել են մեզ հիշելու իրենց մեր աղոթքներում, պատարագներում, հիվանդաց օծման մեջ եւ հիշատակություններում, նրանց հետ նաեւ մե՛զ հիշիր բարությամբ, երկնային Երուսաղեմում՝ երկնքի արքայությունում: Վերացրո՛ւ, Տեր, մեր ախտերը, եւ ների՛ր մեզ վիրավորածներին եւ մեզ:

Քո ողորմությամբ, Տեր, փրկիր մեր բոլորի հոգիները: Տեր, փրկի՛ր Քո ժողովրդին, օրհնի՛ր Քո ժառանգությունը, հովվիր եւ առաջնորդի՛ր նրան հավիտյան: Փրկիր նեղությունների, վշտերի ու տրտմության մեջ գտնվողներին: Ազատություն պարգեւիր դեւերի կապանքների մեջ գտնվողներին: Հագեցրու քաղցածներին բարիքներով: Սփոփիր սրտով ու հոգով տկարներին: Կանգնեցրու ընկածներին, հաստատուն պահիր կանգնածներին: Վերադարձրու կորսվածներին: Հոգ տար այրու եւ որբի մասին: Օգնիր կարիքավորներին: Օրհնիր երկրի պտուղները, պարգեւիր լավ եղանակ, աճեցրու բույսերը, լիովին բարձրացրու գետերի ջրերը եւ օրհնիր ցողն ու անձրեւները: Բավարարիր կարոտյալների պետքերը: Հատուցիր պարտապաններին պարտքերը: Պառակտվածներին միավորիր: Ընդունիր ապաշխարողի ապաշխարությունը: Ընդունիր խոստովանողների խոստովանությունը: Հասկանալու կարողություն տուր երախաներին (չմկրտվածներին): Արդար դատի արժանացրու, Տեր, ճնշվածներին: Մեր սիրտը լցրու ուրախությամբ, երջանկությամբ, մխիթարությամբ, հաճույքով ու շնորհով, որպեսզի ամեն ինչով բավարարված լինելով՝ առաջադիմենք ընդունելի բարի գործերում:

Երկնային օրհնություններով, Տեր, օրհնիր բերքը: Քո բարությամբ օրհնիր, Տեր, այս տարվա պսակը: Օրհնիր, Տեր, սերմանողին, մշակողին, տնկողին եւ աճեցնողին, ինչպես օրհնեցիր Իսրայելի որդիների բերքը վեցերորդ տարում: Օրհնիր, Տեր, մեր համախմբությունը եւ ուղղափառ ժողովրդի բոլոր համախմբությունները: Պահպանիր մեզ համար այժմյան պատրիարքի՝ մեր հայր ու պատրիարք Պապի կյանքն ու հովվապետությունը: Փրկիր նրան, Տեր, եւ նրա ժողովրդին բոլոր աղետներից, փորձություններից եւ վշտերից: Նաեւ առաքելական ծառայության մեջ նրա գործընկերներին, մեր հայր մետրոպոլիտներին, մեր հայր եպիսկոպոսներին, մեր հայր վանահայրերին եւ մեր հայր քահանաներին, մեր եղբայր սարկավագներին, մեր հայր վանականներին, մեր եղբայր աշխարհականներին եւ նրանց, ովքեր եկել եւ մասնակցում են մեզ հետ այս աղոթքին եւ ուղղափառների բոլոր աղոթքներին՝ այժմ խնդրելով իրենց մեղքերին թողություն եւ իրենց հոգուն՝ ողորմություն:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՏԱՌԱՊԱՆՔԸ՝ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ



*Սկիզբը՝ էջ 7*

Երանի՜ սովորեինք նման տառապանքն ընկալել որպես Աստծու մեծագույն ողորմություն: Իհարկե, տառապանքն ու վիշտը ինքնանպատակ չեն: Սակայն մենք չգիտենք՝ ինչ կարող էր լինել կամ ինչ պետք է լինի, ինչ է մեզ սպասվում: Օրինակները բազում են: Ո՞վ գիտի՝ ինչ էր սպասվում այն մանկանը, որին Աստված տարավ, երբ նա հասուն մարդ դառնար. գուցե ավելի մեծ չարիքի՞ց ազատեց: Անքննելի են Տիրոջ գործերը: Կարեւորն այն է, որ ինչպիսի նեղության մեջ էլ լինենք, Աստծուն հայհոյող չդառնանք, այլ միայն օրհնենք Նրա անունը, ինչպես Հոբ Երանելին էր օրհնում իր անլուր վշտերի ու նեղությունների մեջ: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ խորապես ու անսակարկ, մաքրամաքուր սրտով հավատում ու ապավինում ենք Տիրոջը՝ վստահաբար գիտակցելով, որ Նրա ՝ մեզ պատճառած «չարիքն» անգամ մեր իսկ օգտի համար է:

**- Տե՛ր հայր, ծանր վշտերի ու տառապանքների մեջ երբեմն մարդուն թվում է, թե Աստված լքել է իրեն: Դա հաճախ Աստծու դեմ ըմբոստության առիթ է դառնում: Մի՞թե Աստված երբեւէ լքում է մարդուն:**

- Աստված ում սիրում է, նրան նաեւ պատժում է: Ճիշտ այնպես, ինչպես սիրող հայրը, որն իր զավակին խրատում է, դաստիարակում, նաեւ պատժում, այո՛, որովհետեւ ուզում է նրան կատարյալ տեսնել: Սակայն երբեք չի լքում:

**- Վերադառնանք մեր հավաքական ողբերգության՝ ցեղասպանության խնդրին: Կարծես թե միշտ փորձում ենք հասկանալ՝ ինչո՞ւ տեղի ունեցավ: Այս դեպքում նույնպե՞ս առկա էր Աստծու՝ մեզ շատ սիրելու հանգամանքը, մեզ՝ ազգովի:**

- Ինձ համար շատ դժվար է այս հարցի շուրջ խոսելը: Ես իմ տեսակետն ունեմ: Փորձում եմ եղածն ընկալել քրիստոնեության լույսով: Չեմ կարող ասել՝ ինչու այդ ամենը մեր գլխին եկավ, բայց մի բան, ցավոք, ակնհայտ է. մենք երբեք չենք քննում պատճառները եւ լուրջ հետեւություններ չենք անում: Եվ ամենակարեւորը. եթե փնտրում էլ ենք պատճառները, ապա ավելի շատ ո՛չ մեր մեջ, այլ մեզնից դուրս: Մի կողմից, այո՛, աշխարհը՝ բիրտ, անաստված, չի կարող հանդուրժել քրիստոնյա մի ազգի, ինչպես Քրիստոսին չհանդուրժեց՝ ավազակ ու մարդասպան Բարաբբային նախընտրելով: Մյուս կողմից, սակայն, հարկ է, որ փորձենք նախ մե՛ր մեջ փնտրել պատճառը: Ինչո՞ւ Աստված թույլ տվեց այդ անպատմելի աղետը. որքա՞ն էին (եւ ե՛ն) մեր սրտերում կենդանի Հավատը, Հույսը, Սերը... Արդյո՞ք ցամաքելու չափ չէր նվազել այդ սերը միմյանց հանդեպ, կամ որ նույնն է՝ Աստծու հանդեպ: Իհարկե, կարող ենք մխիթարվել նրանով, որ մեր ժողովրդի նահատակված զավակներից շատ-շատերը, իսկապես քրիստոնյա լինելով, փրկություն գտան Աստծուց՝ մարտիրոսվելով որպես Քրիստոսի իսկական վկաներ. գիտենք դրա բազում օրինակները: Իսկ ընդհանուր առմամբ՝ մենք պարտավոր ենք դասեր քաղել մեր իսկ պատմությունից:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# ԱՂՈԹՔՆԵՐ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԱԳՐՔԻՑ



*Սկիզբը՝ էջ 7*

Օրհնի՛ր մեզ եւ օրհնի՛ր նրանց, ների՛ր մեր եւ նրանց մեղքերը՝ անցած եւ որոնց կարող ենք վերադառնալ, անձնական եւ ոչ անձնական, գործված գիշերն ու ցերեկը, ծածուկ եւ հայտնապար:

Պահպանի՛ր, Տեր, համախմբությունների, սուրբ եկեղեցիների, ուղղափառ անապատի եւ նրանում բնակվող ծերերի, նրա սպասավորների, վերակացուների եւ նրանում գտնվողների բարվոքությունը: Պարգեւիր նրանց անվտանգություն, խաղաղություն, սեր եւ ապահովություն: Թշնամուն ցցիր մեր եւ նրանց ոտքերի տակ: Թող նա որեւէ մաս չունենա մեր եւ նրանց մեջ՝ ո՛չ աջից, ո՛չ ձախից, այլ պահպանիր նրանց Քո բարձր աջով եւ Քո պահապան բազկով:

Փրկի՛ր մեզ, Տե՛ր իմ, չար փորձություններից եւ պատրաստված որոգայթներից՝ տեսանելի թե անտեսանելի: Հիշի՛ր, Տեր, նրանց, ում աշխատանքի ու ջանքերի արդյունքն ենք կերել ու խմել, ովքեր ընդունել են մեզ իրենց հարկից ներս եւ մատակարարել իրենց ձեռքով: Վարձատրի՛ր նրանց, Տեր, եւ ժամանակավորի դիմաց փոխհատուցիր հավիտենականով եւ երկրայինի դիմաց՝ երկնայինով: Լցրու նրանց տները եւ շտեմարաններն ամեն բարիքով: Վարձատրիր նրանց երեսնապատիկ, վաթսնապատիկ ու հարյուրապատիկ եւ պարգեւիր մեղքերի թողություն Քո արքայության մեջ:

Հիշի՛ր, Տեր, նրանց, ովքեր մեզ եւ մեր աղքատ եղբայրներին բարերարություն են արել ամեն տեսակ բարի գործով եւ Քո սիրո ու Քո սուրբ անվան պատվի համար, եւ օրհնի՛ր նրանց: Հիշի՛ր, Տեր, նրանց, ովքեր հոգում են պատարագների, ընծաների, ողջակեզների, գինու, ձեթի, երախայրիքի, խնկի, վարագույրների, ընթերցանության գրքերի եւ ընդհանրապես խորանի ամբողջ սպասքի համար: Նրանց տվածի դիմաց, Տեր, պարգեւիր նրանց մեղքերի թողություն: Այս աշխարհում պարգեւիր նրանց բարեշեն կյանք եւ գալիք աշխարհում՝ հավիտենական կյանք:

Հիշի՛ր, Տեր, մեր հանգուցյալ հայրերին ու եղբայրներին, ովքեր ննջեցին ու հանգիստ առան Քրիստոսի հավատով: Հանգի՛ստ պարգեւիր, Տեր, նրանց ամենքի հոգիներին, մեր սուրբ հայրեր Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի ծոցում, Ողջերի երկրում, ուրախալից դրախտում: Իսկ մեզ՝ ողջերիս, օգնիր գտնելու մեր հոգու փրկությունը եւ տնօրինիր մեր կյանքն ըստ Քո շնորհալից կամքի:

Տե՛ր, խնդրում եմ՝ հիշի՛ր ինձ՝ աննշանիս, նվաստիս, տկարիս, մեղավորիս, որ տագնապած եմ եւ անարժան՝ կանգնելու Քո ձեռքերի միջեւ: Իմ մեղքերի եւ հանցանքների բազմության պատճառով ինձ մի՛ մերժիր: Քո կենարար խաչի նշանով բարձրացրո՛ւ Քո ժողովրդի փրկության եղջյուրը: Ցավերի մեջ Քո ամոքումն ենք խնդրում եւ բժշկության ու նվաստության մեջ՝ Քո օգնությունը: Փրկի՛ր մեզ, Տեր, եւ ամենքի՛ն փրկիր նեղություններից: Քո ժողովրդի մեջ եղած հիվանդներին բժշկի՛ր:

Շնորհի՛ր, Տեր, մեզ հետ ներկա եւ բացակա Քո քրիստոնյա ժողովրդին օրհնություն եւ արձակում Քո աստվածային բերանից, արեւելքից արեւմուտք, հյուսիսից հարավ:

Ընդունի՛ր մեզ, ինչպես ընդունեցիր աջակողմյան ավազակին, երբ խաչի վրա էիր, եւ պարգեւեցիր նրան ուրախալից դրախտը:

Հիշի՛ր, Տեր, որբերին ու այրիներին, օտարականներին, անդամալույծներին եւ նրանց, ում ոչ ոք չի հիշում: Նրանց հետ հիշիր եւ մե՛զ, Տեր, երկնային Երուսաղեմում: Հիշի՛ր, Տեր, կանգնածներին կամ նստածներին, քուն մտածներին կամ հիվանդ պառկածներին, ցամաքով, ծովով, օդով, օդանավով, դժվարին ճանապարհներով, հովիտներով, կածաններով, լեռներով, բլուրներով, քարանձավներով ճանապարհորդողներին, գերության եւ աքսորի մեջ գտնվողներին, գերիներին եւ նրանց, ովքեր կապված են չար ուժերի եւ դեւերի կապանքներով: Ամենքին վերադարձրու եւ բեր իրենց կայանները՝ ապահովությամբ, օգնությամբ եւ հոգու, մարմնի եւ շնչի առողջությամբ:

Շնորհի՛ր, Տեր, որ մեր այս աղոթքները Քո առաջ ընդունելի դառնան առանց կեղծավորության, հպարտության, բարձրամտության, ամբարտավանության կամ որեւէ մեղքի: Օգնի՛ր մեզ, Աստված, կատարելու Քո կամքը: Օգնի՛ր մեզ մահվան երկունքի մեջ, ե՛ւ մահվանից առաջ, ե՛ւ նրանից հետո: Քանզի Դու արդար Աստված ես, երկայնամիտ, բազումողորմ եւ բազմագութ: Տե՛ր, շնորհի՛ր, որ Քո Եկեղեցու դուռը մեր առաջ բաց լինի սերնդեսերունդ, մինչեւ ժամանակների վախճանը:

Ողորմի՛ր մեզ, Աստված, ըստ Քո մեծ ողորմության: Բարեխոսությամբ բարեխոսությունների Տիրուհու՝ մաքրության, շռայլության եւ օրհնությունների էության, մեր Տիրուհու եւ մեր ցեղի հպարտության, ողջախոհ Կույսի, անբիծ սուրբ Մարիամի, եւ պատվական նահատակ, ավետարանիչ Մարկոսի՝ եգիպտացիների երկրի առաքյալի եւ քարոզչի, ինչպես նաեւ բոլոր հրեշտակների, հայրերի, մարգարեների, առաքյալների, նահատակների, սրբերի, հոգեկիրների, երկրպագողների, ճգնավորների, հոգեւոր մարտիկների եւ Ադամից սկսած՝ մինչեւ ժամանակների վախճանը, բոլոր նրանց, ովքեր բարի գործերով հաճելի եղան Տիրոջը:

Քե՛զ ենք երկրպագում, Սո՛ւրբ Երրորդություն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

*Անգլերենից թարգմանեց*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԸ*

**ԻՈՀԱՆ ԱՐՔ.**
**ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈ**
**(ՇԱԽՈՎՍԿՈՅ)**

# ՄԵՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎԱՐՔ

*Սկիզբը՝ էջ 6*

Մյուս աշխարհի շեմին ոտք դրած հոգին, ով պատրաստվել է իր վերջին ճանապարհին, չի վախենում իրեն, եւ ամեն ինչ, Աստծո մեջ կորցնելուց: Հանդիսավոր խստությամբ եւ արդեն հրեշտակային անվախությամբ նա իրենից հեռացնում է հարազատների՝ այդ հանդիսավոր պահին անհարիր մարմնավոր սուգը՝ Աստծո եւ իր՝ մեռնողի հանդեպ նրանց անբավարար սիրո արտահայտությունը: Մյուս աշխարհ իր հեռանալու պահին նա ներկաներից ուզում է միայն աղոթքներ, լռություն եւ ակնածանք: Նոր ու մեծ աշխարհի սահմանագլխին կանգնած՝ նա գիտի, որ այլեւս մարդկային ոչինչ չպիտի շեղի կամ պահի իրեն: Տեսանելի տիեզերքն ապրում է այն, ինչ յուրաքանչյուր մարդ՝ մահ եւ հարություն հավիտենության մեջ:

Տերն ասաց, որ մարդիկ մեռնելու են վախից... Որքան Աստծո հանդեպ հավատն ու հույսը եւ Նրա հանդեպ սերը պակասեն, մարդիկ, հասարակությունները, ժողովուրդներն այնքան ավելի ու ավելի պիտի վախենան միմյանցից եւ էլ սակավ սիրեն միմյանց. «Անօրենության շատանալուց շատերի սերը կցամաքի» (Մատթ. ԻԴ 12):

Սակայն այդ ժամ նոր ուժով կսկսվի նաեւ «վերջին ժամանակների» առաքյալների հունձը: Ազատ, որդեգրված («Բոլոր նրանք, որ Հոգով են առաջնորդվում, Աստծո որդիներ են»), Քրիստոսով անվախ, ամենավերջինին պատրաստ՝ նրանք աշխարհին ասելու եւ արդեն ասում են վերջին ճշմարտությունը:

Իրենց Ուսուցչի աչքերով նայելով երկրին եւ նրա գործերին՝ նրանք հաղթում են այս աշխարհի վախին. «Սերը հաղթում է վախին»: Իրենց սիրով անվախ, Աստծո սիրով հզոր՝ Խոսքի աշակերտները պիտի լույս տան աշխարհին նույնիսկ այն ժամանակ, երբ «արեգակը խավարի, եւ լուսինն իր լույսը չտա» (Մատթ. ԻԴ 29):

*Թարգմանությունը՝*
*Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի ՔԿ եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ
**հեռախոս՝**
**(0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 15. 5. 2006 թ.
**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**